Azg Ազգ

6 ՄԱՐՏ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 41(4893)

ISSN: 1829-1651

Սերժ Սարգսյանը Հայաստան է հրավիրել Ռուսաստանի նորընտիր նախագահին

Պուտինը վերադառնում է Կրեմլ, որտեղից չէր էլ հեռացել

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Յուրաքանչյուր պայքար ավարտվում է երբեմն այսպես կոչված հաղթանակով, սակայն առավել հեռուն նայելու դեպքում շատերը նախընտրում են ասել, թե հաղթողներ չեն լինում, լինում են պարտվողներ: Ամեն դեպքում, պարզվում է՝ կան իրավիճակներ, երբ ոչ միայն հաղթում են, այլեւ «հաղթում համոզիչ»: Այսպիսի որակում մարտի 4-ից հնչում է Ռուսաստանի՝ նախագահական ընտրություններում առանց երկրորդ փուլի հաղթանակած Վլադիմիր Պուտինի մասին:

«Հարգելի՛ Վլադիմիր Վլադիմիրի, Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակի տարում հրավիրում եմ Ձեզ այցելել Հայաստան պետական այցով», այդ հաղթանակի կախակցությամբ Պուտինին շնորհավորել ու Հայաստան է հրավիրել նախագահ Սերժ Սարգսյանը՝ երեկվա իր շնորհավորական ուղերձով, որում Պուտինի հաղթանակը «համոզիչ» է նշվում:

Ըստ Ռուսաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախնական արդյունքների, «համոզիչ» գրեթե 64 տոկոս ձայների հետ մեկտեղ «տպավորիչ» էին նաեւ Վլադիմիր Պուտինի արդյունքները, երբ քվեարկության օրն արդեն կեսգիշերին մոտ իր աջակիցների եւ դեռեւս նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ Պուտինը մասնակցում էր Մոսկվայում հավաքին: Ու թեեւ միջազգային դիտորդների ու նախագահի թեկնածուներից առնվազն մեկի՝ Գենադի Զյուգանովի գնահատմամբ «ոչ արդար» ընտրություններ են տեղի ունեցել, Հայաստանից դրանց ուղղված գնահատականներն ու մեկնաբանությունները փոփոխության կամ դիրքորոշման որեւէ տարբերության հեռանկարի մասին չեն խոսում:

Տես էջ 3

Ղազանչի. մոռացության 20 տարի

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

20 տարի առաջ՝ մարտի 4-5-ի երկօրյա հերոսական ինքնապաշտպանությունից հետո ադրբեջանական բանակային կազմավորումների, ոստիկանության հատուկջոկատայիններեի եւ հարակից գյուղերի ավարառուների գազանության զոհ դարձավ ԼՂՀ Մարտակերտի շրջանի Ղազանչի գյուղը:

Գյուղը պաշարման օղակի մեջ էր հայտնվել 1991 թ. տարեվերջին: Ճշտորեն եւ սառը գիտակցությամբ գնահատելով իրավիճակը, տեղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարությունը կայացնում է միակ հնարավոր որոշումը՝ տարհանել կանանց, երեխաներին եւ տարեցներին: 1992 թ. հունվարի 5-ին, նախապես ամբողջ երթուղու վրա պահակակետեր նշանակելով, Ղազանչիից Չլդրան է տարհանվում խաղաղ բնակչության հիմնական մասը: Գյուղում մնում են միայն ինքնապաշտպանության ջոկատի մարտիկները եւ աշխարհազորայինները, ինչպես նաեւ մի խումբ ծերեր, որ չէին ցանկացել լքել իրենց տները կամ մնացել էին՝ հակ եղած դեպքում օգնություն ցուցաբերելու կռվող հարազատներին:

Միջանկյալ դիտարկում. Ղազանչիում այդ պահի դրությամբ ապրում էր խառը՝ հայ-ադրբեջանական ամուսնությամբ երկու ընտանիք: Նարիման Գուլիեւն ամուսնացած էր Թամարայի, իսկ Բարխուդար Հարությունյանը՝ Նուբարի հետ: Նարիմանը հարեւան Սրխավենդ, Նուբարը՝ Մանիխլու գյուղից էր: 1992-ի հունվարի առաջին օրերին Նարիմանը, գյուղում թողնելով կնոջն ու զավակներին, հեռանում է Սրխավենդ, իսկ Նուբարը՝ Մանիխլու: Գյուղի ինքնապաշտպանական ջոկատին անդամագրված էր Նարիմանի որդին՝ Յուրի Գուլիեւը: Մինչեւ վերջին օրը նա, մյուս մարտիկների հետ նույն շարքում, պաշտպանում է Ղազանչին, իսկ Բարխուդար Հարությունյանի ճակատագիրն արժանի է , թերեւս, որ դառնա գեղարվեստական մի հզոր գործի ֆաբուլա. ծերունազարդ մանկավարժը, որ տասնամյակներ ի վեր հարեւան Մանիխլու գյուղի երեխաներին ադրբեջաներեն եւ ռուսերեն էր դասավանդել, անդամագրվում է աշխարհազորին, մարտնչում մինչեւ վերջին փամփուշտը: Գյուղ ներխուժած թշնամին գերում է նրան, տանում Շահբուլաղ, որտեղ դաժանորեն ծեծում են, ապա հանձնում մի ադրբեջանցու, որի որդին զոհվել էր Ղազանչիում՝ որպեսզի «գյավուրին» սպանվածի գերեզմանի վրա մորթեն: Մարդը հրաժարվում է զավակի «գերեզմանը պղծել»: Եվ դահիճները Բարխուդար Հարությունյանին նետում են... վառվող կրահորը: «Շատ մեծ ջանքերի գնով հաջողվեց փոխանակել նրա անճանաչելիորեն այրված ու այլանդակված դիակը եւ հանձնել հայրենի հողին»,- գրում է ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Վլադիմիր Ավագիմյանն իր «Ղազանչի. դրախտի եւ դժոխքի միջով» գրքում (Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատարակչություն, 2011թ. էջ 61):

1992 թ. մարտի 4-ին Ղազանչին ենթարկվում է լայնածավալ հարձակման: Գյուղի աշխարհագրական դիրքն այնպիսին էր, որ ինքնապաշտպանական ուժերը չէին կարող անմիջական օգնություն ցուցաբերել նրա պաշտպաններին: Երկօրյա կատաղի մարտերից հետո, երբ սպառվում են զինամթերքի բոլոր պաշարները, ինքնապաշտպանական ջոկատն ստիպված է լինում դժվարանցելի, շրջանցիկ ճանապարհով նահանջել: Նրա հետ գյուղը թողնում են նաեւ կենդանի մնացած աշխարհազորայինները:

Այդուհանդերձ, հակառակորդին հաջողվել էր պատանդ վերցնել մի խումբ խաղաղ բնակիչների, որ ծեր մարդիկ էին: Ահա նրանք՝ ըստ Վլադիմիր Ավագիմյանի գրքի. Մանուշակ Աղաջանյան, Գյուլխաս Ասլանյան, Սոնա Ասլանյան, Ասյա Ավագիմյան (Վլադիմիր Ավագիմյանի մայրն է), Արուսյակ Գրիգորյան, Արշալույս Գրիգորյան, Բարխուդար Հարությունյան (ում մասին ասվեց վերեւում), Խուրմա Հարությունյան, Առուսամ Մեսրոպյան, Արփինե Մեսրոպյան, Արեւհաս Մինասյան, Նախշուն Պետրոսյան, Սերոբ Պետրոսյան: «Հասնելով մանկությունից հարազատ աղբյուրի մոտ, Ասյա Ավագիմյանը ընդվզեց ճակատագրի դեմ, հրաժարվեց քայլ անգամ առաջ գնալուց, գերադասելով մահը գերությունից... Ազերիները... նրան հեռացնում են (պատանդների խմբից - Վ. Ա.) եւ մի քանի մետր հեռացնելով՝ կրակում ուղիղ սրտին: Այնուհետեւ բերանքսիվայր պառկեցնում են... եւ ծածկում շորով ու ձյունով, որոնք անվնաս պահպանել էին մոր մարմինը, մինչեւ ինձ հաջողվել է բերել եւ հանձնել հայրենի հողին...»,- սրտի կսկիծը հանում ճշմարտացի տարեգրության զսպած, գրում է Վ. Ավագիմյանը (նույն տեղում, էջ 92):

Տես էջ 2

Պայթյուն Էրդողանի նստավայրի մոտ

Երեկ առավոտյան Անկարայում՝ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի նստավայրի մոտ գտնվող կայանատեղում պայթել է ինքնաշեն պայթուցիկ սարք: Ֆրանսպրեսը նշում է, որ փոքր հզորության սարքի պայթյունից վիրավորվել է մեկ մարդ՝ Գերագույն դատարանի աշխատակից, որը շենքի մոտակայքում էր: Պայթյունը խուճապ է առաջացրել կայանատեղում:

Միջադեպը տեղի է ունեցել կառավարության նիստի բացումից մեկ ժամ առաջ: Որեւէ մեկը պատասխանատվություն չի ստանձնել պայթյունի համար:

Մարտի 1-ին Ստամբուլում հեռակառավարմամբ պայթեցված ռումբից վիրավորվել էին 15 ոստիկան եւ 1 քաղաքացիական անձ: Այն ժամանակ եւս որեւէ մեկը պատասխանատվություն չէր ստանձնել:

ՊՐԱՀԱ

Բողոքի ակցիա Ադրբեջանի դեսպանության դիմաց

Երկուշաբթի օրը մոտ երեսուն չեխահայեր բողոքի ակցիա կազմակերպեցին Պրահայում Ադրբեջանի դեսպանատան դիմաց՝ տարբ մատուցելով սումգայիթյան զոհերի հիշատակին եւ Ադրբեջանից պահանջելով ընդունել եւ դատապարտել Սումգայիթի, Բաքվի ու Կիրովաբադի, Մարաղայի հայոց ջարդերը:

«Մենք պահանջում ենք, որ Ադրբեջանի իշխանությունները ոչ միայն դատապարտեն այդ վայրագությունները, այլեւ պատասխանատվության ենթարկեն դրանց կազմակերպիչներին: Պետք չէ խոջալուի ողբերգական դեպքերը, որում մեղավոր են այն ժամանակվա Ադրբեջանի ղեկավարներն ու ժողովրդական ճակատը, բարդել հայերի վրա: Ավելի հեշտ է ընդունել սեփական մեղքը եւ աղաչ-խարել, քան այն բարդել հարեւանների վրա», բարձրախոսով հնչեցրին հայ ցուցարարները:

«Մենք՝ Չեխիայում ապրող հայերս, Ադրբեջանի իշխանություններին կոչ ենք անում դադարեցնել հակահայկական հիստերիան եւ ատելություն սերմանելու փոխարեն, ճշմարտությունն ասել սեփական ժողովրդին», սա էր մասնակիցների վերջնական կոչը:

Խաղաղ ցույցի ընթացքում դեսպանության երկրորդ հարկի պատշգամբից միացրին ադրբեջանական երաժշտություն, իսկ մեկ տասնյակ երիտասարդներ դեսպանության սահմաններից վանկարկում էին՝ «Ղարաբաղ»:

Տես էջ 2

Արթուր Բաղդասարյան. «Քննադատեմ մեզ, բայց առողջ քննադատությամբ, ոչ թե չարախոսությամբ»

Շաբաթ օրը Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի ունեցած «Օրինաց երկիր» կուսակցության համագումարը հետաքրքրական էր մի շարք առումներով: Նախ՝ այդ կուսակցությունից առկա արտահոսքի ու նրա համակիրների փոշիանալու վերաբերյալ խոսակցությունների ֆոնին՝ մարզահամերգային համալիրում պատկառելի թվով (2 հազարից ավելի) պատվիրակների ներկայությունը եւ ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանի հայտարարած 150 հազար կուսանդամների թիվը խոսում էին այն մասին, որ այս կուսակցությանը նվազ թվով տեսնելը ցանկություն է ավելի շատ: Եթե անգամ հեռացողներ եղել են, ապա նրանց փոխարեն անդամագրվողների պակաս չի եղել (այլ խնդիր՝ ի՞նչ ակնկալիքներով): Հաջորդ հետաքրքրական պահը գործընկեր կուսակցությունների ներկայություն-բացակայությունն էր. ասենք, որ հյուրերի թվում մեկ շարքով եւ իրար կողքի նստած էին Սերժ Սարգսյանը, Գագիկ Ծառուկյանը, Գալուստ Սահակյանը եւ համերաշխ ժպտում էին եւ ՕԵԿ-ի (իսկ ավելի շուտ՝ Արթուր Բաղդասարյանի) մասին պատմող ֆիլմը նայելիս եւ հատկապես Ա. Բաղդասարյանի՝ տեղ-տեղ նախընտրական պաթոսի շեշտադրումներ ունեցող ելույթի ընթացքում: Այսինքն՝ ՀՀԿ-ի մասով որ հաստատ ամենաստերգործընկերը հենց ՕԵԿ-ն է լինելու, դա բացահայտ ցուցադրեցին նախ ՀՀԿ-ն՝ նախագահ Սարգսյանի եւ ՀՀԿ փոխնախագահի ներկայությամբ, եւ ապա Արթուր Բաղդասարյանը, որի ելույթը նման էր ամենաբարձր մակարդակով աջակցություն հայտնողի ելույթի («Մենք տրամադրված ենք արդյունքի վրա հենված քաղաքականության», կամ՝ «Նախագահական ընտրություններից հետո շատ բան ունեմ տալու, ստանալու եւ վճարելու»):

Տես էջ 2

Վիկտոր Սողոմոնյանը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին

Ռոբերտ Քոչարյանի գրասենյակի ղեկավար **Վիկտոր Սողոմոնյանը** երեկ պատասխանել է Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ վերջին հանրահավաքում Ռոբերտ Քոչարյանին հասցեագրած «խորտակված նավ» որակմանը՝ որակողին հղելով, թե պետք է բացարձակապես զուրկ լինել առողջ բանականությունից՝ Ռոբերտ Քոչարյանին այդպիսի բնորոշում տալու համար. «Երկար բացատրություններ չեմ տա, քանի որ բոլորն էլ ամեն ինչ գիտեն Քոչարյանի գործունեության մասին՝ ղարաբաղյան պատերազմի հաղթանակից մինչեւ ՀՀ տնտեսական սրընթաց զարգացում: Ռ. Քոչարյանը երբեք ընտրություններում պարտություն չի կրել՝ ոչ ԼՂՀ-ում, ոչ էլ ՀՀ-ում, եւ դեռեւս մեր հանրապետության միակ ղեկավարն է, ով երկու նախագահական ժամկետ է աշխատել, ընդ որում ակներեւ (ժամանակի հետ՝ ավելի ու ավելի ակներեւ) հաջողությամբ: Ինչ «խորտակման» մասին կարող էայստեղ խոսք գնալ՝ պարզ չէ», ասել է Սողոմոնյանը՝ նշելով, որ տերպետրոսյանական միանգամայն անհաջող փոխաբերությունը նոր գործածություն է պահանջում, հաշվի առնելով դրա հեղինակի անձը. «Եթե դիտարկենք Տեր-Պետրոսյանի քաղաքական կենսագրությունն այս փոխհաբերության էության տեսանկյունից, ապա կարելի է պնդել, որ նա պարզապես «խորտակվելու» սովորություն ունի: Նա «խորտակվել է» 96-ին, երբ խայտառակ կերպով պարտվեց ընտրություններում: 98-ին, երբ ստիպված էր քաղաքական «հասակ» իջնել ազգային շահերի դավաճանի խարանով: Նա «խորտակված» վիճակում էր ուղիղ 10 տարի, ինչից հետո երկու անգամ «խորտակվեց» 2008-ին, սկզբում նախագահական ընտրություններում, իսկ ապա քաղաքապետի ընտրություններում, երբ հերթական քաղաքական մարտը տանուլ տվեց Գագիկ Բեգլարյանին: Թվում է, որ արդեն «խորտակվելու» տեղ չկա, նա վաղուց արդեն «հատակին» է: Մի խոսքով՝ ՀԱԿ-ի համամասնական ցուցակի միանձնյա հեղինակն ավելի լավ է հարձակման համար մեկ այլ համեմատություն մտածեր: Այս մեկը բումերանգի շատ ցավալի հարված է հասցնում իր իսկ ձակատին», ասել է Վ. Սողոմոնյանը:

Այս պատասխանից Ռոբերտ Քոչարյանը հնարավոր չէ, որ անտեղյակ լինի: Պարզ է, որ քաղաքական գործընթացներին ակնդետ հետեւող Քոչարյանը առայժմ հարկ է համարել Տեր-Պետրոսյանին պատասխանել, սակայն չի բացառվում, որ արդեն մարտի երկրորդ կեսերից նա իր խոսնակի միջոցով այլ իրողությունների եւս արձագանքի: Համենայն դեպս՝ այդպիսի եզրակացության կարող են հանգել նրա քաղաքական ընթացքին քաջատեղյակները: **Մ. Խ.**

Բողոքի ակցիա Ադրբեջանի դեսպանության դիմաց

1-ին էջից

Հայ երիտասարդները, որ բռնել էին Սումգայիթում զոհված հայերից 27-ի լուսանկարներն ու սումգայիթյան ցեղասպանությանը նվիրված պատասխաններ, հակադարձում էին ադրբեջանցիներին: Ձավեշականն այն էր, որ երբ նանք գոչում էին՝ «ահաբեկիչ», հայերը տալիս էին Ալիեւի անունը: Ադրբեջանցիներին թվում էր, թե իրենց պատրաստած ներկայացմամբ կհակադարձեն հայերին, սակայն հայտնվեցին ավելի ծիծաղելի վիճակում: Իսկ երաժշտությունը միացնում էին «հայկական կողմի» պատվերով:

Վերջում՝ մոմավառությունից հետո, հայ ցուցարարները երթով անցան այդ փողոցում գտնվող այլ դեսպանությունների առջեւով:

Եվս մեկ զուգադիպություն: Չեխ լրագրող Միլան Վոդիչկան այսօրվա «Մլադա ֆրոնտա Դնես» չեխական ազդեցիկ օրաթերթում գրել է ծավալուն հոդված հայկական շախմատի մասին, հայերը այնքան են տարված շախմատով, որ իրենց երկիրը կարելի է անվանել Շախմանիա, հոդվածը վերնագրելով՝ «Մաս Շախմանիայի թագավորից»: Մեզ թվում է՝ այդ մասը միակը չէ:

«ՕՐԵՐ» եվրոպական ամսագիր
Պրահա

Եկամուտների աճը՝ մեծ մասամբ ավելացված արժեքի հարկի շնորհիվ

Ֆինանսների նախարարության բյուջեների կատարման հաշվետվությունների եւ վերլուծության վարչության պետ **Գայանե Զարգարյանը** երեկ ներկայացրել է պետական բյուջեի 2012-ի առաջին ամսվա կատարողականը: Նա մասնավորապես նշել է, որ հունվարին եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 3 տոկոսով կամ 1,7 մլրդ դրամով՝ կազմելով 58,8 մլրդ դրամ: Ծախսերը կազմել են 37.2 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է 0,7 տոկոսի կամ 260 մլն դրամի աճ:

Վարչության պետի ներկայացմամբ՝ 2012-ի հունվար ամսվա ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 55,4 մլրդ դրամ հարկային եկամուտներ, պետական տուրքեր եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ: 2011-ի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 4,6 տոկոսով կամ 2,4 մլրդ դրամով, ինչը մեծ մասամբ պայմանավորված է ավելացված արժեքի հարկի աճով: Ըստ Գայանե Զարգարյանի՝ աճ է արձանագրվել նաեւ եկամտահարկի, ակցիզային հարկի, պետական տուրքերի եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ա. Մ.

Արթուր Բաղդասարյան. «Քննադատեք մեզ, բայց առողջ քննադատությամբ, ոչ թե չարախոսությամբ»

1-ին էջից

Մյուս կուսակցություններից ներկայացուցիչների լրագրողական երկար փնտրտուքները հայտնաբերեցին «Ժառանգության» վարչության քարտուղար Կարինե Հակոբյանին ու կարծեմ էլ ոչ ոքի: Երրորդ առանձնահատկությունն այն էր, որ Արթուր Բաղդասարյանը մի շարք կոշտ-բանմներ ուղղեց ե՛ւ մրցակից քաղաքական ուժերին, ե՛ւ ՕԵԿ-ին քննադատող ՋԼՄ-ներին՝ առաջիններին շշոքեց, թե ուրիշ վատ լինելու հաշվին մի փորձել լավ լինել, երկրորդներին (որոնք պատասխանատու լրատվամիջոցների՝ իր խոսքով) զգուշացրեց, որ ՕԵԿ-ի դեմ պատվիրված հոդվածներ չգրեն:

Արթուր Բաղդասարյանի ելույթը տեւեց մոտ 40 րոպե: Նա հետ նայեց նախ՝ կոալիցիա կազմելով կարողացավ երկիրը զերծ պահել ցնցումներից եւ արտաքին ագրեսիայից, առաջ նայեց՝ «սպառել ենք սխալների եւ պարտությունների ժամանակը», գնահատեց՝ Հայաստանի թիվ մեկ խնդիրը գործազրկությունն է եւ այդ ուղղությամբ պետք է աշխատել (շատ այլ գնահատականներ էլ հնչեցին): Համամասնական ցուցակ չբացահայտեց, բայց հայտնի դարձրեց սկզբունքը՝ մեծ թվով երիտասարդ մարդիկ կլինեն այնտեղ, ովքեր փոփոխությունների համար պատրաստ են պայքարել: «Վստահեք, որ կառուցենք օրենքի Հայաստան», բարձրաձայնեց նա ՕԵԿ-ի նախընտրական կարգախոսը՝ նշելով, թե ընտրություններում քաղաքական ազնիվ մրցակցության կանոններով են առաջնորդվելու, իսկ առաջիկա ամիսները քրտնաջան աշխատանքի ամիսներ են՝ խորհրդարան անցնելու համար, եւ ով լավ չաշխատի իր կուսակիցներից՝ չի պրծնելու կուսղեկավարի ձեռքից: ՕԵԿ-ի ընդդիմախոսներին էլ ասաց, թե չորս տարի քարեր են նետվել իր կուսակցության ուղղությամբ, աժմ եկել է դրանք հավաքելու եւ հարկավոր ուղղությամբ նետելու ժամանակը: Նա նշեց, որ ՕԵԿ-ն իր համակիրներին երբեք չի խաբել եւ «լույսի պես մաքուր է», սակայն «հաճախ հասկացված չի եղել», եւ կուզեին ավելի հասկացված լինել: Նա հայտարարեց, որ իր կուսակցությունը տարբեր ոլորտներում աջակցել է նախագահ Սարգսյանին եւ շարունակելու է աջակցել. «Մենք աջակցելու ենք Սերժ Սարգսյանին իր բոլոր ծրագրերում, որոնք ուղղված են Հայաստանն առաջ տանելուն, ուժեղ, մրցունակ եւ ազդեցիկ երկիր դարձնելուն»: Դիմելով ՕԵԿ-ի քննադատներին՝ Ա. Բաղդասարյանը նշեց. «Քննադատեք մեզ, բայց առողջ քննադատությամբ, ոչ թե չարախոսությամբ»: Մինչ այդ էլ ասել էր. «Մենք ոչ մեկի հացը չենք խլում, մենք մեր հաղթանակն ենք ուզում տանել»:

ՕԵԿ-ի փոխնախագահ Հեղինե Բիշարյանը համագումարի ընդմիջմանը լրագրողներին ասել էր, թե մեծամասնական կարգով 15 թեկնածուի են առաջադրելու:

Մ. Խ.

ՍՊԱՐԱՊԵՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

«Մեր զոհված ընկերները մեզ զրկել են սխալվելու իրավունքից»

«Բանակը Վազգենի տունն էր, ես սիրում եմ մեր բանակը, տխրում եմ բացթողումների համար ու չեմ ուզում, որ բանակի մասին մի վատ բան ասեն: Այնպես արեք, որ Վազգենիս տան մասին վատ բաներ չգրեն»: Խոսքերը Հայաստանի եւ Արցախի ազգային հերոս, սպարապետ Վազգեն Սարգսյանի մորը՝ Գրետա Սարգսյանինն են:

Վազգեն Սարգսյանի 53-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումները սկսվեցին առավոտյան Եռաբլուրում, այնուհետեւ շարունակվեցին նրա կիսանդրու մոտ ծաղիկներ դնելով եւ հարգանքի տուրք մատուցելով: Ավելի ուշ պատշգանության նախարարությունում տեղի ունեցավ հիշատակի միջոցառում նախարարի, սպարապետի ընտանիքի անդամների եւ մարտական ընկերների մասնակցությամբ:

«20-րդ դարի վերջին մեր դեռ գոյություն չունեցող բանակն առաջնորդելու դժվարին պարտականությունը ճակատագրով սահմանվեց Վազգեն Սարգսյանին: Նա կամավորականների համար սպարապետ եղավ, իսկ բանակի համար՝ պաշտպանության նախարար, բայց նա միայն նախարար չէր, այլեւ մեր ավագ ընկերը, դժվարին պահերին մեր ամենավստահելի աջակիցը: Նրան լսում էին, հավատում ու վստահում: Մեր զոհված ընկերները մեզ զրկել են սխալվելու իրավունքից, դա նշանակում է, որ եկել է պահը եւս մեկ անգամ մեր անցած ճանապարհը քայլ առ քայլ վերաիմաստավորելու եւ մեր ամենօրյա գործունեության մեջ քար առ քար իրար վրա դնելով Սպարապետի հիշատակի առարկան՝ բանակի մարտունակությունը ամրապնդելու եւ բազմապատկելու», ասաց Սեյրան Օհանյանը եւ ի նշան երախտիքի սպարապետի հորը պարգեւատրեց որդու անվան՝ «Վազգեն Սարգսյան» գերատեսչական մեդալով:

Հ. Հ.

Ղազանչի. մոռացության 20 տարի

1-ին էջից

Շարունակությունն ավելի քան սահմռկեցուցիչ է: Շահբուլաղ է հասցվում 11 պատանդ: Օրեր անց հաջողվում է փոխանակության միջոցով ազատ արձակել Գյուլխաս եւ Սոնա Ասլանյաններին, Խուրմա Հարությունյանին, Առսամ Մեսրոպյանին եւ Արեւհատ Մինասյանին: Արուսյակ եւ եւ Արշալույս Գրիգորյաններին, Մանուշակ Աղաջանյանին, Բարխուդար Հարությունյանին, Նախշուն եւ Սերոբ Պետրոսյաններին... «ողջակիզեցին կրահորերի մեջ... մայր եւ որդի Նախշուն եւ Սերոբ Պետրոսյաններին նախ մեջք-մեջքի կապկեցին մետաղալարով եւ նոր միայն գցեցին կրահորը... հենց այդպես էլ կապկված՝ տվեցին նրանց կիսով չափ այրված, ածխացած դիակները... մյուսների մարմինների վիճակը վկայում էր, որ նրանք եւս կենդանի ժամանակ երկար են աղերսել ասծուն՝ շուտափույթ մահ ուղարկելու համար... մի՞թե երբեւէ կմոռացվեն նրանց սահմռկեցուցիչ եւ վրեժի կոչող տեսքերը...»,- նկարագրում է ականատեսը, ով, լինելով ԼՂՀ ՆԳ նախարարության աշխատակից եւ մորը կորցրած ղազանչեցի, մասնակցել է պատանդների եւ դիակների փոխանակմանը (տես՝ նույն տեղում, էջ 93):

Ինչպիսի՞ն կլիներ Ղազանչիի ճակատագիրը, եթե ինքնապաշտպանական ջոկատը ժամանակին չտարհաներ նրա խաղաղ բնակչության գերակշիռ մեծամասնությունը: Այդ են վկայում փաստերը. իրենց տներում ողջակիզվել են Աստղիկ Խաչատրյանը, Հեղինե Առսամյանը, Լազր Առուշանյանը, Մանուշակ Ավանեսյանը եւ Գյուլնազ Հայրապետյանը, «իսկ Գյուլխաս Մելիքսեթյանի ձայնից ոչինչ չգտան հողին հանձնելու համար» (նույն տեղում, էջ 85): Սրանք հորինվածքներ չեն, այլ՝ անառարկելի փաստեր: Փաստ է նաեւ, որ Ղազանչին պաշտպանվել է հերոսաբար: Գյուղի մատույցներում ադրբեջանական զինված ուժերը տվել են 127 զոհ, ավելի քան 150-ը վիրավորվել է:

Ղազանչին հետագայում ազատագրվեց: Այսօր այնտեղ հիշում են 20-ամյա վաղեմության հերոսամարտը: Հիշում են զոհվածներին եւ նահատակվածներին: Բայց Ղազանչիի խաղաղ բնակչության սպանդի, մանավանդ՝ պատանդների ողջակիզման մասին, ըստ երեւույթին, աշխարհը դեռ չգիտի:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Մաշտոցյան

Մաշտոցի այգու կառուցապատումն ընթանում է իրավական խախտումներով

Փաստաբանական պալատի 35 փաստաբաններ պալատի փոխնախագահ **Արա Զոհրաբյանի** գլխավորությամբ տարածել են հայտարարություն, որտեղ, անդրադառնալով Մաշտոցի պողոտայի այգու խնդրին, գրում են, որ արձանագրել են իրավական նորմերի բազմաթիվ խախտումներ: Փաստաբանները ներկայացնում են Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են հողերի օգտագործման սխեմաներին եւ գլխավոր հատակագծերին համապատասխան՝ ժամանակավոր օգտագործման համար: «Մեր համոզմամբ՝ Երեւանի գլխավոր հատակագծով եւ Կենտրոն վարչական շրջանի գոտեւորման նախագծով Գլխավոր պողոտայի կանաչ տարածքի Մաշտոց-Կողբացի հատվածում այլ վայրից տեղափոխված առեւտրային ուղղվածություն ունեցող տաղավարների տեղադրում ներառող կառուցապատման որեւէ ծրագիր նախատեսված չէ»: Փաստաբանները նշում են, որ վերոնշյալ հոդվածի 2-րդ մասով համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով են տրամադրվում համայնքների ղեկավարներին: Նույն հոդվածի 3-րդ մասն էլ սահմանում է, որ պետության համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են մրցույթով: «Հատկանշանակ է, որ Մաշտոցի այգու կանաչապատ տարածքում քաղաքի մի վայրից տեղափոխված առեւտրային ուղղվածություն ունեցող տաղավարների տեղադրման կապակցությամբ հողի՝ վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու վերաբերյալ համապատասխան ակտ չի կայացվել: Սահմանված նախագծման առաջադրանքի կազմման, սխեմաների մշակման, փորձաքննության, համաձայնեցման ու հաստատման ընթացակարգերը որոնցով հաստատվել է Կենտրոնի գոտեւորման նախագիծը, այգում չի արվել: Խախտվել են քաղաքաշինության մասին, շրջակա միջավայրի մասին օրենքի հոդվածները: Այս եւ մի շարք այլ իրավական խախտումներ ներկայացնելով՝ փաստաբանները կոչ են արել քաղաքապետարանին՝ դադարեցնել այգում կառուցապատման աշխատանքներն ու ապամոնտաժել արդեն իսկ կառուցած շինությունները:

Երեկ հայտարարությամբ են հանդես եկել մի շարք քաղաքացիական նախաձեռնություններ եւ բնապահպան-բնապաշտպաններ, ովքեր արդեն 22 օր գիշերում են Մաշտոցի այգում եւ պայքարում հանուն այգու փրկության:

«Երեւանի կանաչ գոտիների ոչնչացումը հասել է գագաթնակետին, եւ դրա մասին է վկայում հանրային մեծ բողոքը Մաշտոցի պուրակի շինարարության դեմ»: Ստորագրահավաքի 5000 մասնակիցների անունից նրանք պահանջել են անհապաղ ապամոնտաժել հանրային պուրակում կառուցվող բոլոր շինությունները: Քաղաքապետարանից վերոնշյալ երկու կոչերին առայժմ չեն արձագանքել:

Հ. Հ.

Անակնկալ «Անձնական» փաթեթի բաժանորդների համար

ՎիվաՍել-ՄՏՍ-ը՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, տեղեկացնում է, որ այսուհետեւ «Անձնական» հեռվճարային սակագնային պլանի ամսավճարը կկազմի 7500 դրամ՝ նախկին 10000-ի փոխարեն:

Ավելին, 200 րոպե ներառված խոսելաժամանակը, որը նախկինում տրամադրվում էր ՀՀ այլ ցանցեր զանգահարելու համար, այժմ կարելի է օգտագործել նաեւ 374 97 բջջային եւ 374 47 քաղաքային ցանցեր, ինչպես նաեւ դեպի Ռուսաստան, ԱՄՆ եւ Կանադա զանգահարելու համար: Իսկ ներառված ինտերնետի ծավալն այժմ կազմում է 500 ՄԲ՝ նախկին 200-ի փոխարեն:

Ներառված խոսելաժամանակից օգտվելու համար Ռուսաստան, ԱՄՆ եւ Կանադա անհրաժեշտ է զանգահարել «Հեռազանգ» ծառայության միջոցով:

«Անձնական» սակագնային պլանի այս փոփոխությունը կատարվել է դրա գործարկելուց հետո շուկայում ստացված արձագանքին համապատասխան: Այժմ փաթեթի բաժանորդները ձայնային եւ տվյալների փոխանցման ծառայություններից մատչելի գներով օգտվելու ավելի լայն հնարավորություններ ունեն:

«Անձնական» սակագնային պլանը ձայնային եւ տվյալների փոխանցման առավել մեծ ծավալներ օգտագործողների համար ծախսարդյունավետ լուծում է: Այն հարմար է ոչ միայն գործարար, այլեւ անհատական բաժանորդների համար: Փոփոխված տարբերակի շնորհիվ բաժանորդը ստանում է տեղական եւ միջազգային ձայնային ու տվյալների փոխանցման ծառայությունների յուրատեսակ համադրություն: Նկատենք, որ սովորաբար, եթե վերը նշված ծառայությունները տրամադրվում են առանց համադրված լուծումների, դրանք համեմատաբար ավելի բարձր սակագին ունեն: «Անձնական» սակագնային պլանն առաջարկում է գին/արժեք ամենաօպտիմալ հարաբերակցությունը՝ հիմնվելով ՎիվաՍել-ՄՏՍ-ի բաժանորդներին կարիքների գնահատման հետազոտության արդյունքների վրա:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:

Գյումրիում 1057 մարդ է մասնակցել Ռուսաստանի նախագահի ընտրություններին

Մարտի 4-ին Գյումրիում, Ռուսաստանի քաղաքացի հանդիսացող անձանց համար գործում էին ՌԴ նախագահական ընտրությունների 5 ընտրատեղամասեր: Դրանցից 4-ը տեղակայված էին ռուսական ռազմաբազայի տարածքում եւ սահմանապահ ջոկատում, մեկը՝ ՌԴ Գյումրիում գործող գլխավոր հյուպատոսարանում:

Ընտրություններին այստեղ ընդհանուր առմամբ մասնակցել է ՌԴ 1057 քաղաքացի ոչ միայն Գյումրուց, այլ նաեւ Լոռու մարզից՝ Վանաձորից, Ալավերդուց, Ստեփանավանից: Ըստ հրապարակված նախնական արդյունքների, նրանցից 928-ը ձայն են տվել Վլադիմիր Պուտինի օգտին: Ժիրինովսկին ստացել է 53 քվե, Զյուգանովը՝ 48, Միխայիլ Պրոխորովը՝ 26 եւ Սերգեյ Միրոնովը՝ 2 ձայն:

Գ. Մ.

Սերժ Սարգսյանը Հայաստան է հրավիրել Ռուսաստանի նորընտիր նախագահին

1-ին էջից

Քաղաքագետ, Կովկասյան ինստիտուտի ղեկավար **Ալեքսանդր Իսկանդարյանն**, օրինակ, գտնում է, որ Ռուսաստանը Պուտինի նախագահությամբ էլ չի փոխի դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ: ՌԴ նախագահական ընտրությունների արդյունքները, ըստ Իսկանդարյանի, չեն անդրադառնա նաեւ ղարաբաղյան հարցում Մոսկվայի դիրքորոշման վրա, եւ սա այն հիմնավորմամբ, որ քաղաքագետը չի կարծում, թե Դմիտրի Մեդվեդեւն ունի ինքնուրույն կարծիք որեւէ բանի առնչությամբ:

Այս ամենով հանդերձ, Ալեքսանդր Իսկանդարյանը երեկ հայտարարել է, որ ներքին խնդիրներից ելնելով Մոսկվան ստիպված է լինելու կրճատել իր հետաքրքրությունների վեկտորը ինչպես Հայաստանում, այնպես էլ Ադրբեջանում:

«Ազգի» հետ զրույցում ՀՅԴ բյուրոյի Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու **Կիրո Մանոյանը** եւս կարծում է, որ Պուտինի ընտրությունը ուղղակի որեւէ ազդեցություն չի ունենա Հայաստանի կամ ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման վրա, քանի որ ռուսաստանյան քաղաքականությունը Մեդվեդեւի եւ Պուտինի միջեւ այդքան էլ տարբեր չէ:

Թե ինչպիսին էին ընտրությունները, Մանոյանը գտնում է, որ դա հենց ՌԴ քաղաքացիների խնդիրն է, իսկ Հայաստանի համար տվյալ դեպքում կարեւոր է Ռուսաստանում կայուն իշխանությունը: Հայաստանի ռազմավարական գործընկերը Ռուսաստան պետությունն է, այլ ոչ, ըստ Մանոյանի, այս կամ այն քաղաքական ուժը, ուստի կարեւորը մնում է կայունությունը:

Ռուսաստանի նախագահի ընտրություն Հայաստանում

Եվրասիական միությանն Ադրբեջանի հավանական անդամակցությունը

ԼՂՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ **Վահրամ Աթանեսյանի** ներկայացմամբ՝ Պուտինը վերադառնում է Կրեմլ, որտեղից չէր էլ հեռացել: «Ռուսաստանի հեղինակության շեշտադրումը Պուտինի նախագահությամբ աշխարհաքաղաքական կայունության պահպանման իմաստ ունի», գտնում է Աթանեսյանը, ինչից ելնելով էլ կարծում է, որ այդպես չլինելու դեպքում բացառել չէր լինի մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական վակուումի զգացումը, ինչն էլ կարող էր լցնելու փորձ անել մեր անմիջական հարեւանը:

Աթանեսյանի մեկնաբանությամբ՝ ղարաբաղյան խնդրի համատեքստում շատ բան կարող է որոշել այն, թե ինչպես Պուտինը կփորձի իրականացնել Եվրասիական միությանը նախկին խորհրդային երկրների անդամակցությունը: Ռուսաստանյան փորձագիտական որոշ շրջանակներ, ըստ Աթանեսյանի, ակնկալում են Եվրասիական միությանն Ադրբեջանի անդամակցության մասին որպես ղարաբաղյան հարցի կարգավորման հուսալի հարթակ: Ամեն դեպքում, Վահրամ Աթանեսյանը գտնում է, որ պետք է սպասել, թե ինչ ազդակներ կհաղորդվեն ՌԴ-ից Ադրբեջանին այն դեպքում, երբ Ալիեւ կրտսերն առաջանցիկ տարբերակով արդեն իսկ հաստատել է շնորհավորել Պուտինին:

Ոչինչ չի փոխվի

«Բացի առողջ բանականությունից, պատմական փորձն էլ ցույց է տալիս, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը հայանպաստ է», կարծում է «Ինքնորոշում միավոր» կուսակցության նախագահ **Պարույր Հայրիկյանը**: Իսկ թե Պուտինի ընտրությունը ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ Ռուսաստան-Հայաստան հարաբերությունների վրա, Հայրիկյանը հայտարարում է, որ խոնարհվում է ամեն մի ժողովրդի իսկապես ընտրված ղեկավարի առջեւ, իսկ իսկապես ընտրված լինելու դեպքում ազդեցությունները դրական են:

Ինչ վերաբերում է Արցախի հարցին, ապա Հայրիկյանը **«Ազգի»** հարցին արձագանքեց, որ Պուտինը նոր երեւույթ չէ, ու պետք է հիշել, որ «Պուտինի վարչապետության օրոք 2 վարչական միավորներ (նկատի ունի Աբխազիան եւ Հարավային Օսիան-Ա.Հ.) ճանաչվեցին, Արցախը՝ ոչ»:

Մեդվեդեւ-Պուտին փոխատեղումից որեւէ փոփոխություն չի ակնկալում նաեւ ԱԺՄ նախագահ **Վազգեն Մանուկյանը**, շեշտելով, որ Հայաստանը երկու նախագահների հետ էլ շփվել է: «Ընդհանրապես պետությունների հարաբերությունները պայմանավորվում են պետական շահերով, այլ ոչ անձերով», գտնում է Մանուկյանը, հավաստիացմամբ, թե, չնայած որոշ խախտումներին, «Պուտինը համոզիչ հաղթանակ է տարել»:

Մարտի 4-ին տեղի ունեցած ռուսաստանյան նախագահական ընտրություններին առաջին հերթին հենց ռուս հասարակության արձագանքն է կարեւորում «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ նախագահ, վերլուծաբան **Կարեն Բեքարյանը**: Եվ քանի առայժմ հստակ տեղեկություններ չեն ստացվում Ռուսաստանից, անհրաժեշտություն կա սպասելու 1-2 շաբաթ՝ հստակորեն հասկանալու, թե արդյոք անցած ընտրությունները խնդրահարույց էին: Ըստ Բեքարյանի, եվրոպական համատեքստում դեռեւս պետք է սպասել, սակայն ոչ թե արդյունքների, այլ ռուսաստանյան հասարակության եւ ընդդիմության արձագանքի առումով, թե ինչպես կընկալվեն, «կմարսվեն» այս ընտրությունները:

Արա Սանճյան. Սիրիայի հայ համայնքը արդի մարտահրավերների առաջ*

- Ի՞նչ մարտահրավերների առջեւ է կանգնած այսօր Սիրիայի հայ համայնքը, եւ ի՞նչ հեռեւանքներ կարող է ունենալ սիրիահայ գաղութի համար Բաշար ալ Ասադի վարչակարգի հնարավոր փոփոխությունը:

- Սիրիայում քաղաքական եւ անվտանգության ոլորտներում տիրող անհանգիստ իրավիճակը մի քանի ամիս է, ինչ շարունակվում է, եւ դեռեւս դժվար է կանխագուշակել, թե ինչպես կհանգուցալուծվեն դեպքերը: Համենայն դեպս, մտավախություն ունեմ, որ զարգացումների բոլոր հնարավոր տարբերակները՝ թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ, անդառնալի հետեւանքներ ունենան սիրիահայության համար:

2011-ի մարտ ամսից ի վեր Սիրիայի քաղաքական խճանկարը բաժանված է երկու հակամարտ ճամբարների: Արձագանքելով «արաբական գարնան» համաստեղությանը ժողովրդական պահանջներին՝ ավելի քան 40 տարի իշխանության մեջ գտնվող Ասադ ընտանիքի գլխավորած Բաաս կուսակցության վարչակարգն իր հրաժարականին հայտարարություններում ընդունեց քաղաքական բարեփոխումների անհրաժեշտությունը: Նախ՝ վերացվեց 1963-ից ի վեր անընդմեջ գործող արտակարգ դրությունը, ապա՝ սահմանադրության, ինչպես նաեւ քաղաքական կուսակցությունների մասին օրենքում եւ ընտրական օրենքում փոփոխություններ մտցվեցին: Սակայն նշված բարեփոխումները կյանքի են կոչվում շատ դանդաղ, եւ դեռեւս հստակ չէ, թե դրանք ի վերջո որեւէ որակական փոփոխություն մտցնելո՞ւ են Սիրիայի քաղաքական համակարգում:

Միաժամանակ, Սիրիայի իշխանությունները շարունակում են պնդել, թե իրենց երկրում տեղի ունեցածը միջազգային դավադրության հետեւանք է՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, արեւմտաեվրոպական մի շարք պետությունների, արաբական կամ Պարսից ծոցի միապետական վարչակարգերի եւ Թուրքիայի հովանավորությամբ: Ըստ Սիրիայի կառավարության եւ Մերձավոր Արեւելքում նրա համակիրների՝ այդ երկրները ձգտում են տապալել նախագահ Ասադի վարչակարգը, որովհետեւ վերջինս արմատական կեցվածք ունի Իսրայելի հանդեպ եւ դաշնակցում է Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Այս մեկնակետից ելնելով՝ սիրիական իշխանությունները կանոնավորաբար ուժ են կիրառում հակակառավարական շարժման մասնակիցների նկատմամբ: Իսկ նման կոշտ դիրքորոշում հնարավոր եղավ հետաքրքրել, որովհետեւ սիրիական բանակի ղեկավարությունն ու զինվորականության ջախջախիչ մեծամասնությունը հավատարիմ մնացին նախագահ Ասադին եւ նրա անմիջական շրջապատին՝ ի տարբերություն Թունիսի եւ Եգիպտոսի:

Սիրիական ընդդիմությունը, որի հիմնական մասն արտասահմանում է, բարեփոխումների հարցում թերահավատ է: Ընդդիմադիրները Բաշար ալ Ասադին հանցավոր են համարում մարտ ամսից Սիրիայում թափված արյան համար, իսկ իշխանությունից նրա հեռանալը համարում են կարեւոր նախապայման՝ երկրում ժողովրդավարական կարգեր հաստատելու ճանապարհին:

Այսուհանդերձ, Սիրիայի ընդհանուր բնակչության կես տոկոսից էլ պակաս թվաքանակ ունեցող հայության մեծամասնությունը, ինչպես նաեւ համեմատաբար ավելի մեծաթիվ արաբախոս քրիստոնյաներն ու իսլամադավան, բայց ոչ սուննի փոքրամասնությունները, չեն հավատում սիրիական ընդդիմության քաղաքական լոզունգներին ու խոստումներին: Նրանք դեռեւս նախընտրում են հավատալ նախագահ Ասադի վարչակարգի վերջնական հաղթանակին: Հետաքրքրական է նաեւ, որ նույնիսկ սիրիահայության կառավարամետ ընթացքը ճնշադատող սակավաթիվ հայ ձայները (սոցիալական ցանցերում գրառումներ կատարող սիրիահայ առանձին երիտասարդներ, երկրից հեռացած նախկին սիրիահայեր եւ Երեւանում մի քանի երիտասարդ արաբագետներ) իրենց մեկնաբանություններում շեշտը դնում են ո՛չ թե ընդդիմադիր հոսանքների ժողովրդավարական ներուժի, այլ այն վտանգների վրա, որոնց սիրիահայությունը կարող է բախվել ընդդիմության հնարավոր հաղթանակի դեպքում, եթե վերջիններս ձգտեն վրեժխնդիր լինել Ասադի վարչակարգի համակիրներից:

Սիրիական ընդդիմության նկատմամբ հայության տարբեր հատվածների այս վերաբերմունքը կարելի է բացատրել այն մտավախությամբ, որ գոյություն ունի սիրիական խայտաբղետ ընդդիմության կարեւոր բաղադրիչ համարվող «Մուսուլման եղբայրներ» սուննիական քաղաքական հոսանքի նկատմամբ: Վերջինիս իշխանության գալու դեպքում հնարավոր է, որ սահմանափակվեն Սիրիայի ոչ սուննի փոքրամասնությունների կրոնական ու մշակութային ազատությունները:

Այս իրողությունն, ի դեպ, մտավախություն առաջացրեց թե՛ սիրիահայության եւ թե՛ Մերձավոր Արեւելքի այլ քրիստոնյաների շրջանում: Վաղ նախադեպ է նաեւ Իրաքի պարագան, ուր Սադդամ Հուսեյնի բաաստական վարչակարգի տապալումից հետո շեշտակի ավելացան քրիստոնեական հաստատությունների, ինչպես նաեւ քրիստոնյա հոգեւորականների եւ անհատների դեմ բռնարարքները՝ խթանելով Իրաքից քրիստոնյաների (ներառյալ՝ հայերի) մեծածավալ արտահոսքը:

Այսուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ սիրիահայերը որեւէ լուրջ լծակ չունեն իրենց երկրում քաղաքական զարգացումների վրա ազդելու համար: Նրանք, ի վերջո, պիտի դառնան այդ զարգացումների դրական կամ բացասական արդյունքների կրողները:

Ներկա դրությամբ, անհնար է պատկերացնել Սիրիայի իշխանությունների եւ արմատական ընդդիմության միջեւ փոխզիջումային որեւէ համաձայնության ձեւավորում: Երկու ճամբարներն էլ նպատակադրված են կործանելու իրենց հակառակորդին: Փոխզիջումային լուծում սիրիացիներին կարող են պարտադրել միջազգային մակարդակում ազդեցիկ պետությունները (առաջին հերթին՝ ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը)՝ նախ իրենց միջեւ համաձայնության գալով, եւ ապա այն պարտադրելով սիրիական հակամարտ կողմերին: Նույնիսկ այս դեպքում շատ սիրիահայեր փոխհամաձայնությունը պիտի դիտարկեն որպես փխրուն կամ ժամանակավոր եւ ցանկանան երկրից հեռանալ՝ նախքան հնարավոր արյունահեղության նոր հանգրվանի սկիզբը:

Փաստ է, որ սիրիական ընդդիմությունը վերջին ամիսներին կարողացավ գոյատեւել՝ հակառակ կառավարության կոշտ քաղաքականության: Իսկ սիրիական բանակից հեռացած ընդդիմության համակիր զինվորականները կարողացան կազմել իրենց զորամիավորումները: Եթե վերջիններս շարունակեն դրսից անհրաժեշտ ռազմամթերք եւ տեխնիկական օժանդակություն ստանալ, Սիրիան կարող է կամաց-կամաց գլորվել դեպի քաղաքացիական պատերազմ, ինչպես դա տեղի ունեցավ Լիբանանում 1975 թվականին:

Դժվար է կանխատեսել, թե ինչ հետագա ընթացք կարող է ունենալ այս ճգնաժամը: Բացառված չէ, որ հարեւան Լիբանանի 1975-1990 թվականների փորձը մասամբ կրկնվի եւ ժամանակի ընթացքում կենտրոնական կառավարությունը թուլանա, ներկայումս կուռ թվացող սիրիական երկու հակամարտ ճամբարները կամաց-կամաց տարրալուծվեն, դրանցում գտնվող տարբեր հոսանքները դառնան ավելի ինքնուրույն եւ Սիրիայի ամբողջ տարածքը վերածվի այլազան, «փոքր պատերազմների» թատերաբեմի: Այդ պարագայում եւս սիրիահայության նշանակալից արտագաղթ տեղի կունենա, ինչպես ժամանակին տեղի ունեցավ Լիբանանում:

- Ինչպե՞ս եք տեսնում Մերձավոր Արեւելքում հայ համայնքների (այդ թվում՝ Սիրիայի) հեռանկարը 21-րդ դարին բնորոշ իրողությունների համատեքստում:

- Արաբական աշխարհի հայ գաղութները մեր այսօրվա ընկալումներին համապատասխան կերպարանք ստացան 1915 թվականի Ցեղասպանության եւ 1921-1922-ին Կիլիկիայի հայաթափման հետեւանքով: Չնայած սկզբնական շրջանի բազմաթիվ դժվարություններին, հայ գաղթականները համեմատաբար հեշտությամբ համակերպվեցին հյուրընկալ միջավայրին եւ շուտով արաբական աշխարհը նախընտրեցին տարածաշրջանի այլ երկրներից որպես հայապահպանության համար հարմարավետ տեղ: Ասվածի լավագույն ապացույցը Ալեքսանդրեթի սանջակի եւ 1948-ի սահմաններով Իսրայելի հայության ճակատագիրն էր: Երբ այս երկրամասերը դադարեցին արաբական լինել, այնտեղ բնակվող շատ հայեր լքեցին իրենց տները եւ տեղափոխվեցին մոտակա շրջաններ, որոնք սահմանային փոփոխություններից հետո պիտի շարունակեին արաբական գերիշխանության տակ մնալ: Այս թթնոլորտում, երկու աշխարհամարտերի միջեւ ընկած ժամանակաշրջանում եւ դրանից անմիջապես հետո, արաբական աշխարհի հայության ընդհանուր թվաքանակը շարունակաբար աճ էր արձանագրում:

Իրադրությունը փոխվեց 1950-ական թվականներից: 1948-49 թթ. Իսրայելի դեմ պատերազմում արաբների կրած պարտությունից հետո արաբական աշխարհում ծավալվեց հեղաշրջումների ալիք, որ սկսվեց Սիրիայից՝ 1949-ին եւ իր վերջնակետին հասավ Լիբիայում եւ Հարավային Եմենում՝ 1969-ին: Հասարակության միջին ու ցածր խավերից սերած բանակային սպաների կազմակերպած այս հեղաշրջումներն արմատական փոփոխության ենթարկեցին տվյալ պետությունների իշխող վերնախավերի սոցիալ-դասակարգային դիմագիծը: Միաժամանակ, վերջիններիս իրականացրած սոցիալ-տնտեսական բարեփոխումները կրեցին հեղափոխական բնույթ: Սակայն այս հեղաշրջումներն իրականում ճանապարհ հարթեցին կենտրոնացված ու ավտորիտար քաղաքական համակարգերի արմատավորմանը, ուր համարյա տեղ չկար բազմակարծության, ժողովրդավարության եւ ազատ ընտրությունների համար:

Հեղաշրջումների այս շղթան իր ազդեցությունն ունեցավ Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի եւ Սուդանի հայ գաղութների վրա: Հեղափոխական նոր վարչակարգերի իրագործած բարեփոխումների շրջանակից դուրս մնաց պետության ու կրոնի իրավական փոխհարաբերության հարցը, եւ նշված երկրներում հայությունը շարունակեց պահպանել Օսմանյան կայսրությունից ժառանգված իր կրոնական ու համայնքային կառույցներն ու հավաքական իրավունքները: Սակայն պետական գաղափարախոսություն դարձած արաբական ազգայնականության ոգով կատարված վարչական, կրթական ու մշակութային նորամուծությունները, ինչպես նաեւ պետական կապիտալիզմին ու մասամբ սոցիալիզմին բնորոշ վերափոխումները տնտեսության որոշակի հատվածներում, Իրաքում եւ ավելի քիչ չափով՝ Սիրիայում հայության կրթական, հրատարակչական ու մշակութային ազատությունների սահմանափակմանն ու արտագաղթի նոր ալիքի ձեւավորմանը (փոքր ծավալներով՝ դեպի Խորհրդային Հայաստան, բայց ավելի շատ՝ դեպի արեւմտյան երկրներ (հատկապես՝ ԱՄՆ, Կանադա եւ Ավստրալիա), իսկ Սիրիայի պարագայում՝ նաեւ դեպի հարեւան Լիբանան):

1950-ականները դարձան անկյունադարձային, քանի որ բնակչության այս տեղաշարժերը սկիզբ դրեցին մի նոր իրողության, արաբական երկրները դադարեցին սփյուռքահայերին համախմբող աշխարհագրական միջավայր հանդիսանալուց եւ, ընդհակառակը, վերածվեցին երկրագնդի տարբեր շրջաններ հայություն արտահանող մի երկրամասի: 1960-ականներից հետո վերաաշխուժացած ԱՄՆ-ի, Կանադայի եւ մասամբ՝ Ֆրանսիայի եւ Անգլիայի հայ գաղութները, ինչպես նաեւ Ավստրալիայի նորաստեղծ հայ համայնքը շատ բան պարտական են Եգիպտոսից, Սիրիայից եւ արաբական այլ երկրներից այնտեղ հանգրվանած հայությանը: Ավելի ուշ Լիբանանի հայ գաղութն էլ նորացավ երկրում 15 տարի տեւած քաղաքացիական պատերազմի հետեւանքով, եւ արտագաղթած լիբանանահայության մեծ մասը նույնպես հանգրվանեց Հյուսիսային Ամերիկայում, Ֆրանսիայում եւ Ավստրալիայում: Առավել եւս, ի տարբերություն նախապես հիշատակված Ալեքսանդրեթի ու Պաղեստինի նախադեպերի, Թուրքիայից, Իրանից եւ վերջապես հետխորհրդային Հայաստանից արտագաղթը, շատ չնչին բացառություններով, շրջանցեց արաբական աշխարհը: Արտագաղթողների համար արաբական աշխարհի անհրապուրիչ վայր դառնալու գլխավոր պատճառը վերջին տասնամյակներին այս տարածաշրջանի ավելի տնտեսական լճացումն է, քան արդեն հիշատակված արաբական ազգայնականության եւ իսլամական հոսանքների աճը կամ քաղաքական սահմանափակումները:

Դեռեւս շարունակվող նորագույն այս ճգնաժամի հետեւանքով սիրիահայության գլխին կանգնած վտանգը հնարավոր է, որ դառնա արաբական աշխարհի հայության շարունակական հայաթափման հերթական, բայց դժբախտաբար, կարեւոր մի նոր օղակը: Եթե իրականանա նախորդ հարցմանն ի պատասխան թվարկված տարբերակներից որեւէ մեկը, Հայաստանի տնտեսությունն այսօր ի վիճակի չի լինելու ընդունելու եւ տեղ տալու Սիրիայից մեծ թվով ներգաղթողների՝ մանավանդ միջին եւ ցածր խավերից: Նույնիսկ նրանք, ովքեր Հայաստան կգան, այնտեղից ի վերջո կփորձեն մշտական բնակության տեղափոխվել հյուսիսամերիկյան կամ արեւմտաեվրոպական որեւէ երկիր կամ Ավստրալիա:

Հատկապես Հալեպի հայ գաղութի նորացումը կարող է դեպի արեւմտյան երկրներ արտագաղթի նոր ալիք խթանել նաեւ հարեւան Լիբանանում, քանի որ Բեյրութի, Դամասկոսի եւ Հալեպի հայ համայնքներն իրար հետ կապված են բազմաթիվ՝ մշակութային եւ նույնիսկ ազգակցական կապերով: Այս դեպքում, Սիրիայից քրիստոնյա տարբեր համայնքների արտագաղթը բացասական ազդեցություն կարող է ունենալ Լիբանանի քրիստոնյա բնակչության (ներառյալ՝ հայերի) վրա՝ թուլացնելով նրա ինքնավստահությունը սեփական ուժերի նկատմամբ եւ կապվածությունն իր երկրին:

Սիրիահայ գաղութի նորացումը կարող է միաժամանակ թուլացնել վերջին մի քանի տասնամյակներում Քուվեյթի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Քաթարի եւ Ծոցի արաբական այլ միապետությունների մեջ նորաստեղծ հայ գաղութներին: Այս համայնքները ստեղծվել են առավելապես Լիբանանից, Սիրիայից եւ Իրանից աշխատանքի ավելի լայն հնարավորություններ փնտրող հայերի մեկնելուվ, եւ քանի որ քրիստոնյաների համար գրեթե անհնար է այս երկրներում քաղաքացիություն ստանալ եւ վերջնականապես այնտեղ արմատավորվել, Ծոցի երկրներում հաստատված հայերը կանոնավոր կապ են պահում իրենց ծննդավայրերի հետ: Իսկ եթե հայաթափվի ծննդավայրը, ներկայումս Ծոցի շրջանում բնակվող եւ աշխատող հայերը եւս կարող են լրջորեն մտածել արաբական աշխարհը վերջնականապես լքելու մասին:

Ի վերջո, Սիրիայի հայության նորացումն ավելի պիտի ծանրացնի արեւմտահայերենի գոյատեւման եւ արեւմտահայ մշակույթի հետագա զարգացման հարցը: Հալեպը վաղուց եւ իրավամբ համարվել է ավանդական (այսինքն՝ գլխավորաբար արեւմտահայ) սփյուռքի թթխմորը, իսկ Սիրիայից հեռացողները եւ հատկապես նրանց զավակներն ու թոռներն աստիճանաբար պիտի դադարեն արեւմտահայերեն խոսելուց եւ արեւմտահայերենով ստեղծագործելուց՝ որդեգրելով իրենց հյուրընկալ երկրների լեզուները՝ անգլերենը կամ ֆրանսերենը եւ նույնիսկ Հայաստանի պարագայում՝ արեւելահայերենը... Արաբական աշխարհի հայաթափումով աշխարհի երեսին պիտի մնան շատ քիչ աշխարհագրական միջավայրեր, ուր հայերն ավանդաբար ու միասնաբար խոսում են արեւմտահայերեն:

(*) Միչիգանի (ԱՄՆ) համալսարանի (Դիրբորն) հայագիտական հետազոտությունների կենտրոնի վարիչ, արեւելագետ-հայագետ պրոֆ. Արա Սանճյանի հետ այս հարցազրույցը, որը հրատարակում ենք որոշ կրճատումներով, վերցված է «Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ» գրքից (հեղ.՝ Արաքս Փաշյան, Լիլիթ Հարությունյան):

ԱԶԳ **Միջազգային**

Տիկին Քլինթոնի խոսումներն ու գործնական քայլերը

Ֆրանսիայի Սենատի՝ ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող օրինագծի (որը հետագայում հակասահմանադրական ճանաչվեց) առնչությամբ ԱՄՆ կոնգրեսական Ադամ Շիֆի մտահոգություններին եւ հարցադրմանը, թե արդյոք որեւէ բան փոխվե՞լ է նրա դիրքորոշման մեջ (տես «Ազգի» մարտի 2-ի համարը), ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը պատասխանել էր, որ ոչ, դիրքորոշումը չէր փոխվել եւ ցեղասպանության ժխտումն էլ քրեականացնելու օրենք Ամերիկան չի պատրաստվում ընդունել: Նա նշել էր, որ տվյալ օրինագիծը «վտանգավոր քայլ էր» խոսքի ազատությունը սահմանափակելու տեսանկյունից: Նա թեեւ կրկնել էր, թե 1915-ի իրադարձությունները 20-րդ դարի «ամենաահավոր գազանություններից» էին, բայց խուսափել էր օգտագործելուց «ցեղասպանություն» բառը: Մինչդեռ 2008-ի Բարաք Օբամա-Հիլարի Քլինթոն նախագահական թեժ ընտրությունների նախօրյակին, այդ ժամանակ սենատոր Հ. Քլինթոնը հետեւյալ սիրալիր, համարձակ ու անբռնազբոս մտքերն էր բռայլորեն արտահայտել Մ. Նահանգներ-Հայաստան հարաբերությունների շուրջը հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ: Ստորեւ թարգմանաբար՝ նրա ելույթը.

«Նախագահական թեկնածուներից միակն եմ, որ երկար ժամանակ պաշտպանել եմ Հայոց ցեղասպանության բանաձեւը: 2002 թվականից ես այդ բանաձեւի հովանավորներից եմ եղել եւ պաշտպանում եմ այդ օրենսդրության անցկացումը Կոնգրեսի երկու պալատներում:

Հավատացած եմ, որ հայերի դեմ Օսմանյան կայսրության կատարած սարսափելի իրադարձությունները ցեղասպանության բացահայտ օրինակներ են (ընդգծումը մերն է): Ես երկու անգամ գրել եմ նախագահ Բուշին՝ խնդրելով, որ իր հիշատակի տարեկան ելույթներում հիշատակի Հայոց ցեղասպանությունը, եւ նախագահ ընտրվելու դեպքում ճանաչելու եմ Հայոց ցեղասպանությունը: Մեր ընդհանուր բարոյականությունը եւ, որպես մարդու իրավունքների ջատագովի, մեր երկրի հանդեպ ժողովուրդների տածած վստահությունը մարտահրավերներ են մեզ համար, որպեսզի Միացյալ Նահանգների Կոնգրեսն ու նախագահը ճանաչեն եւ հիշեն Հայոց ցեղասպանությունը:

Եթե 20-րդ դարի զանգվածային վայրագություններից դասեր պետք է քաղենք, ապա առաջին հերթին պատմության փաստերին ազնվորեն պետք է վերաբերվենք, որպեսզի վստահ լինենք, որ դրանք չեն կրկնվի: Դա չի վերաբերում միայն անցյալին, այլեւ մեր ապագային: Մենք պարտավոր ենք փակել խոսքերի եւ գործերի միջեւ եղած բաց տարածությունը՝ զերծ մնալու համար զանգվածային բռնություններից: Ահա թե ինչո՞ւ ես պաշտպանում եմ «պահպանելու պատասխանատվություն» գաղափարը: Որպես նախագահ աշխատելու եմ հիմնել եւ առաջ տանել Մ. Նահանգների եւ միջազգային հասատությունների այն կարողությունը, որը ժամանակին եւ արդյունավետ կերպով կարձագանքի՝ կանխելու որեւէ զանգվածային գազանություն:

Բուշի վարչակարգի դատապարտական խոսքերը իշխանությունների կողմից բավականաչափ պաշտպանություն չգտան, որպեսզի կանխեին Դարֆուրի ցեղասպանությունը: Ես պաշտպանում եմ Դարֆուրը ոչ թռիչքային գոտի հայտարարելու գաղափարը: Ես առաջնորդել եմ միջազգային հզոր շարժումը, որի շնորհիվ Սուդանի կառավարությանը թույլ չի տրվի այսուհետեւ անպատիժ գործել կամ միջամտել միջազգային խաղաղարար ուժերի գործունեությանը, որն անհրաժեշտ է պաշտպանելու համար Դարֆուրի ժողովրդի անվտանգությունը:

Մեծապես գնահատում եմ մեր երկրի աբխույժ ամերիկահայ համայնքի հետ իմ բարեկամությունը: Դա համահունչ է այդ համայնքի շահերը պաշտպանելու իմ նվիրվածությանը:

Որպես առաջին տիկին ես առիթ եմ ունեցել ելույթ ունենալու 1994-ին առաջին անգամ Սոիտակ տանը կազմակերպված հավաքին, որին հրավիրված էին Հայաստանի եւ ամերիկահայ համայնքի ներկայացուցիչներ՝ նշելու Հայաստանի անկախության պատմական տոնը: Այդ ժամանակ ասացի, որ Ամերիկան պաշտպանելու է Ձեզ՝ իրականացնելու Բուզանդ Կրանյան բանաստեղծի խոսքերով ասած՝ «Լեռներում խաղաղ ապրելու, երազելու եւ ստեղծագործելու ձեր երազանքը»:

Որպես նախագահ ես աշխատելու եմ ընդլայնել եւ բարելավել Մ. Նահանգներ-Հայաստան հարաբերությունները՝ մեր երկու երկրների համընդհանուր խնդիրներին անդրադառնալու պարագայում, ինչպիսիք են, օրինակ, տնտեսական կապերի եւ առեւտրի ամրապնդումը, ահաբեկչության դեմ պայքարը, ժողովրդավարական ինստիտուտների կայացումը, ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների խորացումը եւ տարածաշրջանային մտահոգությունների շուրջը համագործակցությունը, այդ թվում՝ արդար եւ ժողովրդավարական լուծում գտնելը Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը: Նախագահ ընտրվելու դեպքում խոստանում եմ մեծացնել Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին հատկացվող օժանդակության ծավալները:

Հուսով եմ՝ կշարունակեմ, որպես նախագահ, աշխատել ամերիկահայկական համայնքի հետ՝ հաղթահարելու ներքին եւ արտաքին, միջազգային մարտահրավերները, որ մեր առաջ կկանգնեն, եւ կառուցելու հարաբերություններ մեր դավանած արժեքների այն հզոր հիմքերի վրա, որոնք արդեն երկար ժամանակ միացրել են Ամերիկայի եւ Հայաստանի ժողովուրդներին:

Հ. Ծ.

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Պերես. «Իսրայելը չի ձգտում պատերազմի, բայց դրա ծագման դեպքում կհաղթի»

Ամերիկա-իսրայելական բանակցություններ Վաշինգտոնում

Վաշինգտոնում՝ Ամերիկա-իսրայելական հանրային կաղերի կոմիտեի (AIPAC) ամենամյա կոնֆերանսում երեկ ունեցած ելույթում Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը հայտարարել է, որ իր երկիրը չի ձգտում Իրանի հետ զինված հակամարտության, բայց դրա ծագման դեպքում կհաղթի:

«Իսրայելը տեսել է պատերազմի սարսափները եւ չի ձգտում դրան: Մենք միշտ նախընտրում ենք խաղաղությունը, բայց եթե ստիպված լինենք կռվել, չեմ կասկածում, մենք կհաղթենք», ասել է Պերեսը, որի խոսքերը մեջբերում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Պերեսը եւ վարչապետ Նաթանյահուն մարտի 4-ից Վաշինգտոնում բանակցում են ԱՄՆ ղեկավարության հետ: Պերեսի խոսքերով՝ ԱՄՆ-ը եւ Իսրայելը համամիտ են, որ Իրանը միջուկային զենք չպիտի ունենա:

Նույն կոնֆերանսում ելույթ ունենալով՝ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հիմնականում խոսել է Իրանի մասին, վստահություն հայտնելով, որ դեռ ժամանակ կա իրանցիների միջուկային ծրագրի հարցի դիվանագիտական լուծման համար: Նա միաժամանակ կրկնել է, որ ԱՄՆ-ը պատրաստ է բոլոր, այդ թվում ռազմական միջոցներն օգտագործել Իրանում միջուկային զենքի ստեղծում թույլ չտալու համար:

AIPAC-ի կոնֆերանսում Օբաման նաեւ հայտարարել է, որ ինքը Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսին պարգեւատրելու է Ազատության մեդալով: Ազատության նախագահական մեդալը ԱՄՆ բարձրագույն քաղաքացիական պարգեւն է: Պարգեւատրման արարողությունը տեղի կունենա ընթացիկ գարնանը Սոիտակ տան շենքում: Նախագահի որոշմամբ Ազատության մեդալը շնորհվում է ԱՄՆ անվտանգության կամ ազգային շահերի ապահովման գործում ներդրված ավանդի, մոլորակի խաղաղության պաշտպանության մեջ ներդրված ավանդի, ինչպես նաեւ այլ բնագավառներում ձեռք բերված հաջողությունների համար: Վերջին տարիներին այդ մեդալը հանձնել են մասնավորապես ԱՄՆ պաշտպանության նախկին նախարար Ռոբերտ Գեյթսին, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելին եւ միլիարդատեր ու ներդնող Ուորեն Բաֆեթին:

Մոտ երկու հազար սիրիացի գաղթական Լիբանանի սահմանի մոտ

ՄԱԿ-ի փախստականների գործերի վարչության մանր քարտուղարին վկայակոչելով՝ Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ Սիրիա-Լիբանան սահմանի մոտակայքում խռնվել են գրեթե երկու հազար սիրիացի գաղթականներ: «Նրանց թիվը վերջնականապես պարզ կդառնա մոտ ժամանակներս», պարզաբանել են ՄԱԿ-ում:

Ականատեսները պատմում են, որ ավելի վաղ՝ մարտի 4-ին սիրիական զորքը գնդակոծել էր Լիբանանին սահմանակից Ալ Քուսեյր քաղաքը, որի բնակիչները փորձել էին ապաստան գտնել հարեւան երկրում: Գաղթականների մեծ մասը կազմում են կանայք եւ երեխաները, որոնք դեպի Լիբանան են շարժվում առանց փոխադրամիջոցների:

Ալ Քուսեյրը սահմանից հեռու է 12 կմ եւ ընկած է Հոմս քաղաքից 40 կմ հարավ: Ամբողջ փետրվար ամսին սիրիական բանակը հրետակոծել է ապստամբական կենտրոն Հոմսը: Մարտի 2-ին տեղեկություններ ստացվեցին, որ զինվորները կրակում են Հոմսից դեպի Լիբանան փախչողների վրա:

ՄԱԿ-ի տվյալներով, Սիրիայի քաղաքացիական պատերազմի ընթացքում Լիբանան է անցել մոտ 7 հազար գաղթական: Սիրիայում գաղթականների ընդհանուր թիվը 11-15 հազար է: ՄԱԿ-ի գնահատումների համաձայն, կառավարական զորքերի եւ ապստամբների զինված դիմակայության 1 տարում սպանվել է մոտ յոթուկես հազար մարդ:

Տեսախաղերը բարելավում են չափահասների տեսողությունը

Բժիշկները բուժել են աչքի հազվագյուտ խանգարումներ ունեցողներին՝ բուժման կուրս նշանակելով կրակոցներով տեսախաղերը: Զարմանալի արդյունքները վիճելի են դարձնում այն տեսակետը, թե տեսախաղերը անխուսափելիորեն վնաս են տեսողությանը:

Հետազոտողները հայտնաբերել են, որ այն չափահասները, ովքեր ամսական առնվազն 40 ժամ զբաղվել են նշված խաղերով, այնքան են բարելավել իրենց տեսողությունը, որ կարողացել են տեսողության ստուգման ստանդարտ աղյուսակում մեկ կամ երկու տող ավելի ներքեւ կարդալ:

Խաղերը, որոնք պահանջում են, որ խաղացողները պատասխանեն այն գործողություններին, որոնք ուղղակիորեն իրենց առջեւ են կատարվում եւ իրենց տեսադաշտում, եւ հետեւեն երբեմն աղոտ եւ տարբեր ուղղություններով շարժվող օբյեկտներին, ուժեղացրել են այն չափահասների տեսողական համակարգը, ովքեր ծննդյան օրից տեսողական լուրջ խնդիրներ են ունեցել:

Հետազոտողները հնարավոր են համարում, որ կարելի է վարժեցնել ուղեղը՝ հաղթահարելու որոշ հանգամանքներ:

«Բոլորի տեսողությունը էականորեն բարելավվել է», այսպես է ներկայացրել իր հետազոտությունը Հեմիլթոնի Մքմասթեր համալսարանի (Օնտարիո, ԱՄՆ) հոգեբան **Դաֆնի Մորերը** Գիտության առաջադիմության ամերիկյան ասոցիացիայի Վանկուվերում կայացած տարեկան ժողովի ժամանակ:

Աշխատանքի համար հիմք է ծառայել նախկինում կատարված մի ուսումնասիրություն՝ ըստ որի տեսախաղերը կարող են օգնել տեսողության խանգարումների ժամանակ: Հոկտեմբերին Կալկաթայի աչքի միկրովիրաբուժության կլինիկայի բժիշկ **Սոմեն Դոքը** հայտարարել էր, որ Unreal Tournament խաղը բարելավել է 10-18 տարեկանների տեսողությունը, ովքեր ունեցել են ամբլիոպիա կամ ծույլ աչք»:

Մորերը աշխատել է 19-31 տարեկան վեց չափահասների հետ, ովքեր ծնված օրվանից ունեցել են զույգ աչքերի կատարակտ: Նրանց համար համարյա արգելափակված է եղել ամբողջ տեսողական աշխարհը՝ բացառությամբ լույսի եւ մթության ակնհայտ փոփոխությունների: Երեխաները, ովքեր ծնվել էին այդ հիվանդությամբ, իրենց կյանքի վաղ շրջանում վիրահատվել էին կատարակտը վերացնելու համար, կոնտակտային լինզաներ էին դրվել նրանց աչքերին՝ տեսողությունը ուղղելու համար: Բայց չնայած այս ամենին, նրանք ավելի թույլ տեսողություն ունեին, քան իրենց առողջ հասակակիցները:

«Նորածինները (նույն հիվանդությամբ) կարող են տեսնել, բայց միայն լավ տարբերակված խոշոր առարկաները: Նրանց տեսողությունը 40 անգամ ավելի վատ է, քան նույն խնդիրն ունեցող չափահասներինը: Սա զգալիորեն բարելավվում է առաջին վեց ամիսների ընթացքում, բայց մոտ յոթ տարի է պահանջվում չափահասների մակարդակին հասնելու համար», ասում է Մորերը:

«Նույնիսկ շատ վաղ՝ երկու ամսական հասակում կատարված բուժման դեպքում էլ տեսողության պակաս կլինի», ասում է նա: Խնդիրը չի վերանում, քանի որ կատարակտը խանգարում է երեխայի գլխուղեղի կեղեւի այն հատվածի նորմալ զարգացմանը, որը պատասխանատու է տեսողական ինֆորմացիայի մշակման համար: «Չնայած խնդիրը սկիզբ է առնում նրանց աչքերում, իր վերջին հանգրվանն է գտնում գլխուղեղի կեղեւի տեսողական հատվածում»:

Տեսախաղերը դրականորեն են ազդում հիվանդների գլխուղեղի կեղեւի տեսողական հատվածի վրա, որն էլ իր հերթին որոշ չափով վերականգնում է նրանց վնասված տեսողությունը: Խաղերը լավագույն արդյունք են ապահովել այն խաղացողների համար, ովքեր կարողացել են խաղի ավելի բարձր մակարդակների հասնել:

Մորերը ակնկալում է, որ տեսողության բարելավումը տեւական բնույթ կունենա, սակայն մոնիտորինգ է անցկացնում հիվանդների մեջ: Նա ասում է, որ կլինիկական փորձարկումը հաջորդ քայլն է լինելու՝ նախքան բժիշկները որպես բուժման միջոց կկիրառեն տեսախաղերը:

«Սովորաբար մենք կարծում ենք, որ տեսողական նմանատիպ խնդիրները հարատեւ են, բայց վերջին հետազոտության արդյունքները հնարավոր են համարում, որ դա կարող է եւ այդպես չլինել: Չափահասների ուղեղը կարող է բավական ճկուն լինել եւ հնարավորություն տալ բուժվելու», ասում է Մորերը, «այս տեսանկյունից, տեսախաղերը նրանց համար օպտիմալ տեսողական թերապիայի դեր են կատարում»:

Մորերը այժմ աշխատում է այլ հետազոտողների հետ՝ մշակելու այնպիսի համակարգչային խաղեր, որտեղ բռնություն չկա: «Ես կողմ չեմ այն բանին, որ ստիպենք մարդկանց խաղալու խաղեր, որտեղ իրենք կրակողների դեր են ստանձնում», ասում է նա:

guardian.co.uk

Ռուդոլֆ Խառատյանի գեղանկարներում՝ տիեզերական լեզուն է թեւածում

Արվեստը միակ տիեզերական լեզուն է

ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ

Ռուդոլֆ Խառատյանը Հայաստան վերադառնալուց հետո շատ կարճ ժամանակահատվածում հայ բալետային արվեստը բարձրացրեց նոր մակարդակի: Նրան Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի գլխավոր բալետմայստեր հրավիրեցին ու չսխալվեցին, քանզի անցած երկու տարում իրար են հաջորդում ոչ միայն բալետի փայլուն երեկոները, օպերաներում բալետային հատվածների կատարումներն ու յուրօրինակ պարերի բեմադրությունները: Մի խոսքով, բեմում տիրում են «մարմնի լեզուն» եւ զգացմունքները: Աշխարհում հայտնի խորեոգրաֆ Ռուդոլֆ Խառատյանի ստեղծագործական ուղուն **«Ազգը»** անդրադարձել է եւ գրեթե բոլոր նրա հաջողություններին արձագանքել: Աշխարհի շատ երկրներում նրան ճանաչում են նաեւ որպես գեղանկարիչ: Ռ. Խառատյանը 1991-ից սկսած չորս տասնյակ ցուցահանդեսների է մասնակցել Կանադայում, Իտալիայում, ԱՄՆ-ում, ՌԴ-ում, Հնդկաստանում, Եգիպտոսում: Դրանցից բացի երկու տասնյակ անհատական ցուցահանդեսներով հանդես է եկել ԱՄՆ-ում (Վաշինգտոն, Նյու Յորք), Կանադայում (Մոնրեալ) եւ Հայաստանում:

Մեկ տարի առաջ Երեւանում բացվեց Ռուդոլֆ Խառատյանի անդրանիկ ցուցահանդեսը մայր հայրենիքում եւ բարձր գնահատվեց արվեստագետների ու հանրության կողմից: Հենց այդ գնահատանքին ու ջերմ բարեմաղթանքներին ի պատասխան, գարնան առաջին օրը հայ կանանց ու մայրերին, գեղեցկության մեկամսյակին նվիրեց նա իր 2-րդ անհատական ցուցահանդեսը: Գեղեցիկ, հանդիսավոր պայմաններում, Կամերային թատրոնի շենքում «Երկաթ» ակումբը կազմակերպել էր ցուցահանդեսի բացման արարողությունը: Ցուցահանդեսը բացեց ու գեղանկարիչ Ռուդոլֆ Խառատյանին ներկայացրեց ակումբի խմբագիր **Սիլվա Կարապետյանը**: Ցուցահանդեսը, որում ներկայացված են վերջին 10 տարիներին վրձնած Ռ. Խառատյանի 31 գեղանկարներ, կգործի երկու շաբաթ: «Խառատյանի գեղանկարներն առանձնանում են փայլող գունային գամմայով, ուր գերիշխում են ոսկին եւ դեղինը, հիշեցնում են Բյուզանդական սրբանկարներ կամ էջեր նկարազարդ ձեռագրերից...», այսպես է բնորոշել Մերիլենդի համալսարանի պրոֆեսոր, արվեստաբան **Կլաուդիա Ռուսոն**:



«Ազգի» այն հարցին, թե ի՞նչն է նկարներին հիմք ծառայել եւ ինչպե՞ս են դրանք ստեղծվել, Ռուդոլֆ Խառատյանն ասաց. «Ինձ համար հիմնականում երեք գործոն կա, որով ես առաջնորդվում եմ ստեղծագործելիս: Դրանք են՝ գույն, կլոր գծերը եւ քառակուսիները: Կլորը՝ երկինքն է, քառակուսին՝ կազմակերպվածությունն է մտահղացման ու գունային գամմաները: Այս երեք կոմպոզիցիաները հիմքն են իմ ստեղծագործությունների»: Գեղանկարչի մոտ մինչ կտավի առջեւ նստելը, ծագում են գաղափարները, որոնք խմորվում են ու էմոցիոնալ վիճակի բերվում, որոնց հիմքում մարդկային մարմնի շարժումն է, ուրվագծերը, սիմվոլները, որոնք դառնում են կտավ, բացատրում է Ռուդոլֆ Խառատյանը: Նա իր ամբողջ ստեղծագործական կյանքով հաստատում է այն միտքը, թե տաղանդավոր մարդը տաղանդավոր է ամեն ինչում, եւ նրա լուսավոր, բազմերանգ, դինամիկ գեղանկարչությունը եւս մեկ անգամ ապացուցում է, որ նա փայլուն տիրապետում է Վարպետ Քոչարի հիշատակած տիեզերական լեզվի բոլոր նրբերանգներին եւ արտահայտչամիջոցներին:

Գարնանային վառ գույների շնչով էր ողողվել Կամերային թատրոնի ճեմասրահը, եւ Ռուդոլֆ Խառատյան գեղանկարչի աչխատանքներից հույսի, լույսի եւ ապագայի կայծեր էին ճառագում, որոնցից դժվար էր հեռանալ:

Մ. Մ.

«Հայտուղերսթար-5»-ը՝ մայրության եւ գեղեցկության տոնին

Գարնան առաջին կիրակի օրը կայացավ «Հայտուղերսթար-5»-ի չորրորդ գալա-համերգը, որը ամբողջությամբ նվիրված էր գարնան ամենագեղեցիկ տոնին՝ մայրության եւ գեղեցկության մեկամսյակին: Յուրօրինակ այդ տոնական համերգը բացվեց հարգանքի տուրք մատուցելով օրեր առաջ կյանքից հեռացած հանրահայտ ամերիկուհի փոփ-երգիչ Ուիթնի Հյուսթոնի հիշատակին: Չորրորդ գալա-համերգին մասնակցող 9 երիտասարդները կատարեցին Հյուսթոնի լավագույն երգերից մեկը՝ «I Will Always Love You» եւ վառված մոմերը ձեռքներին հոտնկայս հարգեցին նրա հիշատակը: «Շանթի» համերգասրահում ներկա գտնվողները մեծ հաճույք ստացան ու հիացան նման խմբակային կատարումից:

«Ազգը» շարունակելով համագործակցությունը «Հայտուղերսթար-5» ծրագրի հետ, որպես ինֆորմացիոն գործընկեր, ներկա էր այդ տոնական համերգին, որի ընթացքում մասնակիցների բոլոր կատարումները նվիրված էին կյանքում ամենաթանկ էակին՝ մորը: Կային հուզումնալից կատարումներ: Քանի որ խվեարկությունը հեռուստադիտողների կողմից դեռ շարունակվում է, ուստի չենք ուզում որեւէ մասնակցի գովազդել, թողնելով յուրաքանչյուրին ճիշտ կողմնորոշվել ու իր ձայնը տալ իր իսկ հավանած թեկնածուի օգտին: Նշենք նրանց անունները ըստ հերթականության՝ Էլիզաբեթ Ադիկյան, Ռիմա Ֆարսյան, Անահիտ Հարությունյան, Լիանա Արոյան, Արաքսյա Ամիրխանյան, Զուլիետտա Սարգսյան, Արթուր Մացակյան, Սոնա Ռուբինյան, Երվանդ Մաթեւոսյան:

Քվեարկության մանրամասներին կարող եք ծանոթանալ նաեւ **www.shanttv.com** կայքէջից, որտեղից էլ մանրամասներ կստեղեկանաք «Հայտուղերսթար-5»-ի օրագրերին: Իսկ թե մասնակիցներից ո՞վ դուրս կմնա եւ ո՞վ կհայտնվի վտանգավոր գոտում՝ կստեղեկացնենք խվեարկության արդյունքների ամփոփումից հետո:

ՄԱԲԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Պետեր Ռոզենի «Արամ Խաչատրյան» ֆիլմը փարիզյան կինոակումբում

Փարիզի «Ռուբեն Մամուլյան» կինոակումբում տեղի է ունեցել Պետեր Ռոզենի «Արամ Խաչատրյան» (2003) ֆիլմի ցուցադրությունը: Հրապարակային դասախոսությամբ հանդես է եկել երաժիշտ եւ կոմպոզիտոր **Ալեքսանդր Սիրանոսյանը**:

Ժամանակագրական ֆիլմը հռչակավոր կոմպոզիտորի կյանքի պատմությունն է՝ կապված ԽՍՀՄ-ի, Վրաստանի, Հայաստանի պատմության հետ: Այդ կապերը, քաղաքական ու պատմական իրադարձությունները երբեմն նպաստել են կոմպոզիտորի փառքին, երբեմն էլ, ընդհակառակը, վտանգավոր եւ աղակայունացնող են եղել նրա ստեղծարար գործունեության եւ կյանքի համար:

Օրինակ, տպավորիչ զուգահեռներ են անցկացվում սալինյան ժամանակաշրջանում կոմպոզիտորների «պսակազերծման» եւ Խաչատրյանի «Սպարտակ» բալետի միջեւ: Ի դեպ, ժամանակագրությունը բնավ չի խանգարում ֆիլմի ամբողջ ընթացքում ունկնդրելու նվագախմբերի եւ անհատ կատարողների կողմից Խաչատրյանի ստեղծագործությունների կատարումը:

Ֆիլմի ցուցադրությունից հետո դիրիժոր, կոմպոզիտոր, դաշնակահար, երաժշտագետ, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի երկարամյա տնօրեն Ալեքսանդր Սիրանոսյանը Խաչատրյանի երաժշտական ֆրազների ու մոտիվների միջոցով ներկաներին բացատրել է, թե կոմպոզիտորն ինչպես է կարողացել հայկական մեղեդիներ ներածել իր ստեղծագործությունների մեջ:

Զեկուցողն այնուհետեւ խոսել է շուտով հրապարակվելիք սեփական հետազոտությունների մասին: Փարիզի «Աշխարհ» թերթի տվյալների համաձայն, դրանք վերաբերում են եվրոպական մի շարք թատերախաղերում եւ օպերաներում (մանավանդ 17-18-րդ դարերում) առկա պատմական եւ մշացածին հայ կերպարներին:

Երեկոյի վերջում տեղի է ունեցել կարծիքների փոխանակություն:

Պ. Ք.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հատատված է ՀՀ ՄՇԻԳ-ԱՇՁԲ-58 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2012 թ փետրվարի 23-ի թիվ 1 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ՄՇԻԳ-ԱՇՁԲ-58

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն, որը գտնվում է f. Երեւան, Կառավարական 3 շենք հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում:

Պարզեցված ընթացակարգի գնման հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ Սյունիքի մարզի Կուրիս գյուղի տարածքում գտնվող, պատմության եւ մշակույթի հուշարձան հանդիսացող Սբ Ամենափրկիչ եկեղեցու կազմախանդման, տեղափոխման եւ նոր վայրում վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջական փաթեթի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ Սյունիքի մարզի Կուրիս գյուղի տարածքում գտնվող, պատմության եւ մշակույթի հուշարձան հանդիսացող Սբ Ամենափրկիչ եկեղեցու կազմախանդման, տեղափոխման եւ նոր վայրում վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերի ամբողջական փաթեթի մշակման աշխատանքների ձեռքբերումը:

Գնումները ֆինանսավորվելու են ՀՀ 2012 թ. պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին եւ գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետն է՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի պայմանների համաձայն, գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձիք, կարող են մասնակցել մրցույթին անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձեւով ստանալ անվճար հրավեր:

Պարզեցված ընթացակարգի հրավերը թղթային ձեւով տրամադրվելու է անվճար: Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել f. Երեւան, Կառավարական 3 շենք հասցեով, 7-րդ հարկ, ՀՀ մշակույթի նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակվելու պահից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 15:00-ն, եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Պարզեցված ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ f. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում՝ 5 օրացուցային օրվա ընթացքում:

Պարզեցված ընթացակարգի հաղթող կճանաչվի Մասնակիցների բավարար գնահատված հայտերով՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին, համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ, հեռ. 58 51 78

ACBA-CREDIT AGRICOLE BANK

Սույն թվականի ապրիլի 11-ին, ժամը 12:00-ին f. Երեւան, Դավիթաշեն I թաղամաս, 42/2 հասցեում տեղի է ունենալու «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության եւ իրավագիտության ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանող Ռոման Սահրադյանը մարտի 6-ին, ժամը 12-ին փորձելու է համաշխարհային ռեկորդ սահմանել՝ կատարելով «մեծ պտույտ առաջ» վարժությունը: **Այս վարժության կատարումն իր նախադեպը չունի ոչ Հայաստանում, ոչ էլ որեւէ երկրում:** Մեր համալսարանի 23-ամյա ուսանողն այս անգամ նախատեսել է 200-ից 300 պտույտ կատարել:

Նա 2011 թվականի սեպտեմբերի 24-ին արդեն կատարել էր «մեծ պտույտ հետ» վարժությունը՝560, իսկ դեկտեմբերի 16 ին՝ 1001 անգամ՝ գերազանցելով իր նախկին ցուցանիշը:

Այս ռեկորդները գրանցվել են Հայաստանի «Դյուցազնագրքում»: Հետագայում հնարավոր է, որ Ռոման Սահրադյանը դիմի նաեւ Գինեսի ռեկորդների գրքում գրանցվելու համար:

Մարտի 6-ին, ժամը 12-ին նա բոլորին հրավիրում է Ալբերտ Ազարյանի անվան մարզադպրոց, որտեղ կցուցադրի իր արտասովոր ուժի հնարավորությունը:

Հայտարարություն

Սույն թվականի մարտի 15-ին, ժամը 12:00–ին ՀՀ Երեւան քաղաքի, Ազատության պող. 1/18 հասցեի թիվ. 1 տարածքում տեղի կունենան քաղաքացի Սիմա Ղուկասյանի կողմից ներկայացված f. Երեւան, Տ. Մեծի 53/3 հասցեում նախատեսվող առեւտրա-հասարակական կենտրոնի աշխատանքային նախագծի և նրա կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ f.Երեւան Կոմիտաս 29 և Ազատության պող. 1/18 հասցեում: Հեռ. (010)22-14-85, (010)220218, (010)221568, 091210087

Վարդան Մինասյան. «Ֆուտբոլիստների ընտրությունը կատարվում է 3 չափանիշներով»

Երեկ ֆուտբոլի հանրապետական ֆեդերացիայում կայացավ Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ **Վարդան Մինասյանի** մամուլի ասուլիսը, որում նա անդրադարձավ Կիպրոսում անցկացված ստուգողական 2 հանդիպումներին:

«Ես դեռեւս ուսումնամարզական հավաքից առաջ էի հայտարարել, որ Կիպրոսում կայանալիք 2 խաղերում մեծ թվով ֆուտբոլիստների ենք փորձարկելու, խաղալու հնարավորություն ենք տալու նրանց, ովքեր ավելի քիչ են հանդես եկել հավաքականում անցյալ տարի: Դրա հետ մեկտեղ հարկ էր փորձարկել նաեւ նորեկներին: Քանի որ հավաքականի հիմնական կազմի ֆուտբոլիստներից ոմանք ուշ էին ժամանել Կիպրոս, ուստի նրանց հանգստանալու հնարավորություն տվեցինք: Այդ ամենը հաշվի առնելով, ավելի նպատակահարմար գտանք, որ Կանադայի հավաքականի հետ խաղում ասպարեզ դուրս գա մարտական կազմը:

Այն, ինչ նախատեսել էինք, կատարվեց: 2 խաղերը շատ հարցերի պատասխաններ տվեցին: Կարծիք կազմեցինք ինչպես հիմնական կազմի, այնպես էլ երիտասարդների ֆունկցիոնալ վիճակի, խաղային ունակությունների մասին», նշեց Վարդան Մինասյանը:

Հավաքականի գլխավոր մարզիչն դուր էր եկել Արազ Օզբիլիսի խաղը: Ըստ մարզչի, Օզբիլիսը շատ շուտ մերվեց կոլեկտիվին, ինչը նաեւ տղաների շնորհիվ էր, որոնք ջերմ ընդունեցին հավաքականի նորեկին: Վարդան Մինասյանը հավատացած է, որ Օզբիլիսը շատ օգտակար կլինի հավաքականին ու կուժեղացնի թիմի խաղը:

Գլխավոր մարզիչը խոսել է Նորայր Մամեդովի հետ, որը շատ էր ուրախացել հրավերի համար: Նորայրը մի փոքր վնասվածք ուներ, ուստի ցանկանում էր ամրապնդվել իր թիմում: Բացի այդ էլ, նա մտադիր է փոխել ազգանունը եւ հայկական ազգանունով նորամուծը նշել ՀՀ հավաքականում: Մամեդովը կիրավիրվի հույների հետ մայիսի 31-ին կայանալիք ընկերական հաջորդ հանդիպմանը մասնակցելու: Ի դեպ, Վարդան Մինասյանը ցանկություն ունի եւս մեկ ընկերական խաղ կազմակերպել հունիսի 5-ին: Մայիսին կազմակերպվելիք հավաքի ժամանակ ավելի մեծ ուշադրություն կդարձվի տակտիկական հարցերին: Ընկերական վերջին հանդիպումը նախատեսված է օգոստոսի 15-ին Բելառուսի հավաքականի հետ:

Պատասխանելով այս կամ այն ֆուտբոլիստին հավաքական չհրավիրելու պատճառների մասին հարցին, Վարդան Մինասյանը նշեց, որ նրանց ընտրությունը կատարելիս ելնում է 3 չափանիշներից: Առաջինը՝ ֆուտբոլիստը պետք է իր խաղամակարդակով համապատասխանի հավաքականին, 2-րդը՝ իր խաղառճով համապատասխանի ազգային ընտրանուն եւ 3-րդ ամենակարեւորը՝ լինի հայրենասեր:

Գլխավոր մարզիչը հավաստիացրեց, որ ներկայումս չկա հայազգի մի ֆուտբոլիստ, որ հավաքականի մարզչական շտաբի ուշադրությունից դուրս մնացած լինի: Մարզչական շտաբը մշտապես հետեւում է նրանց ելույթներին, հարկ եղած դեպքում մեկնում է արտերկիր՝ ներկա գտնվելու նրանց մասնակցությամբ հանդիպումներին: Օրինակ, առաջիկայում Վարդան Մինասյանը մտադիր է մեկնել Հոլանդիա՝ դիտելու Նորայր Մամեդովի խաղը:

Գլխավոր մարզչին շարունակում է հուզել 2-րդ դարպասապահի հարցը: Եթե Սարգիս Հովսեփյանին արժանի փոխարինող ներկայումս էլ կարելի է գտնել, ապա Ռոման Բերեզովսկուն համարժեք դարպասապահ դեռեւս չունենք: Ուստի առաջիկա հանդիպումներում էլ կփորձարկվեն դարպասապահներ: Ինչպես հայտնի է, Ռոմանը Մալթայի հետ աշխարհի առաջնության մեկնարկային ընտրական խաղում հանդես գալու իրավունք չունի:

Մինչեւ ընտրական մրցաշարի մեկնարկը շատ կարեւոր է, որ հավաքականի ֆուտբոլիստները զերծ մնան վնասվածքներից: Նաեւ կարեւոր է, որ մեր լեգեոնականները արտերկրի ակումբներում մշտապես խաղան ու խաղային զգալի փորձ կուտակեն, ինչը կօգնի հաջող հանդես գալու նաեւ ազգային հավաքականի կազմում:

3-րդ տուրն իսկական մղձավանջ էր Հայաստանի պատվիրակների համար

Մրցաշարի 3-րդ տուրն իսկական մղձավանջ էր Հայաստանի ներկայացուցիչների համար, որոնք բոլորն էլ պարտվեցին: Էլինա Դանիելյանը զիջեց Տատյանա Մոլչանովային, Լիլիթ Գալոյանը պարտվեց Ֆրանսիան ներկայացնող հայազգի գրոսմայստեր Էլմիրա Սկրիպչենկոյին, Լիլիթ Մկրտչյանն էլ անհաջող խաղաց Նաստասիա Զյազուլկինայի հետ պարտիայում: Անդրանիկ պարտությունը կրեց նաեւ Մարիա Կուրսովան Տրանգ Հոանգի հետ պարտիայում: Աննա Հայրապետյանը 2-րդ պարտությունը կրեց Բահիրա Կովանովայի հետ մրցախաղում:

3 տուրից հետո նույնքան միավորով աղյուսակը գլխավորում են լիտվացի Վիկտորիա Չմիլիտեն, ֆրանսիացի Մարիա Սեբագը եւ ռումինացի Քրիստինա Ֆոյսորը: Ֆրանսիան ներկայացնող Էլմիրա Սկրիպչենկոն ունի 2,5 միավոր: Ռուսաստանցի Նելլի Ալեքսանյանի օգտին գրանցված է 2 միավոր:

Թուրքիայի Գազիանթեփի քաղաքում մեկնարկել է շախմատի կանանց Եվրոպայի անհատական առաջնությունը: Անցկացված 3 տուրից հետո Հայաստանը ներկայացնող 5 շախմատիստուհիներից 4-ը՝ Էլինա Դանիելյանը, Մարիա Կուրսովան, Լիլիթ Մկրտչյանն ու Լիլիթ Գալոյանը վաստակել են 1,5-ական միավոր, իսկ Աննա Հայրապետյանի օգտին գրանցված է 1 միավոր:

Մեկնարկային տուրում Դանիելյանը հաղթեց Լիլիա Դոլջեւիչին, Մկրտչյանը պարտության մատնեց Միխայելա Սանդուին, Գալոյանը շահեց պարտիան Էմել Կայայի հետ մրցավեճում, իսկ Կուրսովան առավելության հասավ Միսլինա Բոգկուրտի նկատմամբ: Միակ պարտությունը կրեց Աննա Հայրապետյանը՝ զիջելով Նինո Խուրցիձեին:

2-րդ տուրում միակ հաղթանակը տոնեց Հայրապետյանը՝ պարտության մատնելով Ալյոնա Մարտինկովային: Գալոյան-Դանիելյան, Մկրտչյան-Սեդինա, Գաղոնենկո-Կուրսովա պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

Պարտություններ միեւնույն հաշվով

Ֆուտբոլի ՀՀ չեմպիոն «Ուլիսն» Անթալիայում ստուգողական երկու հանդիպում անցկացրեց Գրոդնոյի «Նեմանի» եւ Բրյանսկի «Դինամոյի» հետ ու պարտվեց միեւնույն 1-3 հաշվով: Առաջին խաղում 25-րդ րոպեին 11 մ հարվածով հաշիվը բացել էր Արսեն Բալաբեկյանը, 2-րդում եւս աչքի էր ընկել այս ֆուտբոլիստը՝ «թրջելով» հաշիվը: Հետաքրքրական է, որ Անթալիայում անցկացրած առաջին խաղում էլ «Ուլիսը» 1-3 հաշվով զիջել էր Բելառուսի «Գոմելին»:

Ցավոք «Նեմանի» հետ հանդիպման առաջին խաղակեսին լուրջ վնասվածք ստացավ Արթուր Քոչարյանը, որին անմիջապես տեղափոխեցին հիվանդանոց: Պարզվեց, որ նա կողոսկրերի հատվածում կոտրվածքներ ունի: Այնպես որ առնվազն մեկ ամիս Քոչարյանը խաղադաշտ դուրս չի գա:

Մարտի 7-ին «Ուլիսը» կմրցի «Սլավյանսկիի» հետ, իսկ մարտի 10-ին ուժերը կչափի «Ֆակելի» հետ:

ՇԱԽՄԱՏ

Դավիթ Հարությունյանն արժանացավ գլխավոր մրցանակին

Ֆրանսիայի Ռոշֆոր քաղաքում վերջնագիծը հասավ շախմատի միջազգային մրցաշարը, որի 58 մասնակիցների թվում էին 3 հայ շախմատիստներ: Գերազանց հանդես եկավ վրացահայ գրոսմայստեր Դավիթ Հարությունյանը, որը 9 հնարավորից վաստակած 7 միավորով դարձավ մրցաշարի հաղթող: Ավարտական տուրում Դավիթը ոչ-ոքի խաղաց վրացի Դավիթ Զոջուայի հետ: Նույնքան միավոր էր վաստակել նաեւ եգիպտացի Բասեմ Ամինը, որը Դավիթին զիջեց լրացուցիչ գործակիցներով:

Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը 6 միավորով գրավեց 7-րդ տեղը: Ավարտական տուրում նա պարտվեց Բասեմ Ամինին, այլապես կարող էր հավակնել գլխավոր մրցանակին: 5 միավորով Գեւորգ Հարությունյանը գրավեց 18-րդ տեղը: Գեւորգը զիջեց Անդրեյ Սումետսին:

Բաբուջյանը զիջեց առաջատարի դիրքը

Իրանի Ռաշտ քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի հերթական 4 տուրերն այնքան էլ հաջող չէին Լեւոն Բաբուջյանի համար, որը կրելով 2 պարտություն, զիջեց առաջատարի դիրքը: 4-րդ տուրում Լեւոնն առաջին պարտությունը կրեց իր հետ աղյուսակը գլխավորող Օլեգ Կոռնեեւից: Հաջորդ տուրում նա հաղթեց Ամիր Կովսարինիային, սակայն Մոհսեն Շարբաֆի հետ մրցավեճում կրկին պարտվեց: 7-րդ տուրում Բաբուջյանը հաղթեց ադրբեջանցի Նիջաթ Աղաեւին ու 5 միավորով ընթանում է 7-րդ տեղում:

Արսեն Եղիազարյանը 4,5 միավորով 25-րդ տեղում է: Նա տոնեց 3 հաղթանակ Ամին Տաբաթաբաեւի, Սահեբալի Աթանեջաթի եւ Սոզանկարի նկատմամբ, պարտվեց Էլդար Մուսաեւին:

3 անընդմեջ պարտություններից հետո վերջապես միավոր վաստակեց Վլադիմիր Կանջարյանը: Նա 4 մրցախաղերում իր օգտին գրանցեց 2 միավոր: 6-ական միավորով առաջատարներն են Օլեգ Կոռնեեւն ու Պոուա Իդանին:

Բ խմբում հանդես եկող Մարիա Գեւորգյանը 6 միավորով 5-րդ տեղում է: Նա հաղթեց Բաբակ Սեդիին, Ամին Աբեդին եւ Բարդիա Շեյխհասանին: Իսկ ահա 5-րդ տուրում Մարիան միակ պարտությունը կրեց Ռեզա Միրզաջանիի հետ մրցավեճում:

5,5 միավորով 10-րդ տեղում է Հայկ Մարտիրոսյանը: Նա եւս առաջին պարտությունը կրեց 6-րդ տուրում իրանցի Ֆարյադից, իսկ մնացած 3 պարտիաներում վաստակեց 2,5 միավոր: Բ խմբում 6,5-ական միավորով առաջատարներն են իրանցիներ Ռեզա Միրզաջանին, Դավոդ Մուսավին եւ վրացի Սուլխան Սիրբիլաձեն:

Այս անգամ նվազագույն հաշվով

Վրաստանում ուսումնամարզական հավաք անցկացնող «Արարատը» ստուգողական 2-րդ հանդիպումն անցկացրեց: Այս անգամ էլ արարատցիները պարտվեցին՝ սակայն նվազագույն 0-1 հաշվով: Մրցակիցը Փոթիի «Կոլխեթին» էր:

Հաջող մեկնարկ

Տիգրան Պետրոսյանը, Զավեն Անդրեասյանը, Դավիթ Հարությունյանը եւ Գեւորգ Հարությունյանը 2-ական հաղթանակով են մեկնարկել Ֆրանսիայի Քափել լա Գրանդ քաղաքում սկսված շախմատի միջազգային մրցաշարում: Նրանք 12 շախմատիստների հետ գլխավորում են աղյուսակը: Նրանցից կես միավոր պակաս են վաստակել ֆրանսահայ Տիգրան Ղարամյանն ու բրազիլահայ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը:

Հակոբյանի հաղթական գոլերը

Անթալիայում է նաեւ առաջին խմբի առաջնության մասնակից, նորաստեղծ «Մարտունի-Ալաշկերտը», որը ստուգողական առաջին խաղում 2-1 հաշվով հաղթել է Նորվեգիայի 3-րդ խմբում հանդես եկող «Վեստոֆսենին»: Մեր թիմից 2 գոլերն էլ խփել է փորձառու Արամ Հակոբյանը:

Հերթական նոկաուտը 50-րդն էր Կլիչկոյի կարիերայում

Ուկրաինացի գերծանրքաշային պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Վլադիմիր Կլիչկոն հաջողությամբ պաշտպանեց WBO-ի, WBA-ի, IBF-ի եւ IBO-ի վարկածներով իր 4 գոտիները՝ 4-րդ ռաունդում նոկաուտի ենթարկելով ֆրանսիացի Ժան Մարկ Մորմեկին: Դա Կլիչկոյի մարզական կարիերայում հոբելյանական՝ 50-րդ նոկաուտն էր: Անցկացրած 60 մենամարտերում Կլիչկոն 57 հաղթանակ է տոնել: Մորմեկի համար Դյուսելդորֆում կայացած մենամարտը 41-րդն էր: Ֆրանսիացին 5-րդ պարտությունը կրեց:

Այդ մենամարտում Մորմեկը ոչինչ չէր ձեռնարկում՝ բացի պաշտպանվելուց: Իսկ ուկրաինացի բռնցքամարտիկը մշտապես գրոհում էր եւ ուժգին հարվածներ էր հասցնում մրցակցին, որի արդյունքում էլ ֆրանսիացին հայտնվեց նոկաուտում:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 27-ի թիվ 1 որոշմամբ

Ծածկագիրը՝ ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ - 8/12

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի 400 գծ. մ. ֆանակով, 150x100x1000 մմ չափսի կափարիչով մալուխային վաֆերի պատրաստման աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում կայանի 400 գծ. մ. ֆանակով, 150x100x1000 մմ չափսի կափարիչով մալուխային վաֆերի պատրաստման աշխատանքների կատարումը:

Գնումը ֆինանսավորելու է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2012 թվականի ծախսերի նախահաշվով նախատեսված հատկացումների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2012թ. մայիսի 01-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն բոլոր անձինք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, հաղթահատման չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձևով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ն: Պարզեցված ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 5000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալու օրվա ընթացքում պարզեցված ընթացակարգի հրավերը տրամադրել պարզեցված ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ն և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների, մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների, հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար, Պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը Պատվիրատուն հայտարարում է հայտարարությունը էլեկտրոնային ձևով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

1) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

2) դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

«Հայկական ատոմային էլեկտրակայան»
փակ բաժնետիրական ընկերություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 27-ի թիվ 1 որոշմամբ

Ծածկագիրը՝ ՀԱԷԿ-ՊԸԱՇՁԲ - 7/12

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կայանի մեքենայական սրահի 14,7 նիշի մասնեբաժնի խողովակաբարերի ամբողջականության հաշվարկով նախատեսված ուժեղացումների ներդրման նախագծային-կոնստրուկտորական մշակումների աշխատանքների գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում կայանի մեքենայական սրահի 14,7 նիշի մասնեբաժնի խողովակաբարերի ամբողջականության հաշվարկով նախատեսված ուժեղացումների ներդրման նախագծային-կոնստրուկտորական մշակումների աշխատանքների կատարումը:

Գնումը ֆինանսավորելու է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2012 թվականի ծախսերի նախահաշվով նախատեսված հատկացումների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2012թ. ապրիլի 01-ը ընկած ժամանակահատվածն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն բոլոր անձինք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, հաղթահատման չունեցող անձ լինելու հանգամանքից:

Թղթային ձևով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 11:30-ը: Պարզեցված ընթացակարգի հրավեր տրամադրելու համար պահանջվում է վճար 5000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի Կոնվերս բանկ դրամով վճարման դեպքում 1930000199200100 «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հաշվեհամարին: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը ստանալու օրվա ընթացքում պարզեցված ընթացակարգի հրավերը տրամադրել պարզեցված ընթացակարգի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք. Մեծամոր, վարչական շենք հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 11:30 և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Մասնակիցների, մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների, հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար, Պատվիրատուին պետք է ներկայացվեն հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը Պատվիրատուն հայտարարում է հայտարարությունը էլեկտրոնային ձևով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

1) Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով՝

2) գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկել պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի որոշումները՝ պայմանագիր կնքելու մասին որոշմամբ սահմանված անգործության ժամկետում.

դատական կարգով բողոքարկել գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդին բողոքարկելու դեպքում բողոքը ներկայացվում է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով, գրավոր: Բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար ՀՀ դրամ, որը պետք է փոխանցվի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Հայէկոնոմբանկի Արաբկիրի մասնաճյուղում ունեցած 163058561289 հաշվեհամարին:

«Հայկական ատոմային էլեկտրակայան»
փակ բաժնետիրական ընկերություն

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 5.3.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: